

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային տեղեկատու

ԹԻՎ 149

ՓԵՏՐՎԱՐ 2012



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 3

Խոշտանգում

Հաշմանդամություն առաջացած ոստիկանության վատ վերաբերմունքից՝ խախտում
Savin v. Ukraine / Սավինն ընդդեմ Ուկրաինայի, 34725/08-----12

Անմարդկային/Նվաստացուցիչ վերաբերմունք

Չորս տարիների ընթացքում շիզոֆրենիայով տառապող բանտարկյալի պարբերաբար տեղափոխումը մեկ հոգեբուժական հիվանդանոցից մեկ ուրիշը՝ խախտում
G. v. France / Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի, 27244/09-----12

Արտաքսում

Բաց ծովում հայտնաբերված միգրանտների վերադարձը ծագման երկիր՝ խախտում
Hirsi Jamaa and Others v. Italy / Հիրսի Յամաա և այլք ընդդեմ Իտալիայի, 27765/09-----12

ՀՈԴՎԱԾ 5

Հոդված 5 § 1

Ազատագրվում՝

նախատեսված օրենքով

Կասկածյալի ձերբակալման ժամանակ օրենսդրական ընթացակարգին չհետևելը՝ խախտում
Creanga v. Romania / Կրեանգան ընդդեմ Ռումինիայի, 29224/03-----12

Հոդված 5 § 1 (գ)

Հիմնավոր կասկած

Կասկածյալի ձերբակալման ժամանակ օրենսդրական ընթացակարգին չհետևելը՝ խախտում
Creanga v. Romania / Կրեանգան ընդդեմ Ռումինիայի, 29224/03-----12

Հոդված 5 § 1 (ե)

Տկարամիտ անձինք

Կամքին հակառակ ավելի քան յոթ տարի մտավոր հետամնաց դիմումատուի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելը՝ խախտում չկա
D.D. v. Lithuania / Դ.Դ. ընդդեմ Լիտվայի, 13469/06-----12

Հոդված 5 § 4

Կալանավորման օրինականության վերանայումը

Մտավոր հետամնաց դիմումատուի անկարողությունը՝ բողոքարկելու իր նկատմամբ իր կամքին հակառակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելը, առանձին իրավական ներկայացուցչության միջոցով՝ խախտում
D.D. v. Lithuania / Դ.Դ. ընդդեմ Լիտվայի, 13469/06-----12


ՀՈԴՎԱԾ 6

Հոդված 6 § 1 (քաղաքացիական)

Արդար դատաքննություն

Հետադարձ ուժով օրենսդրական միջամտություն մասնավոր անձանց միջև տեղի ունեցող դատավարության մեջ՝ խախտում
Arras and Others v. Italy / Արասը և այլք ընդդեմ Իտալիայի, 17972/03-----12

Մտավոր հետամնաց դիմումատուի խնամակալության հարցով անարդար դատաքննություն՝ խախտում



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

D.D. v. Lithuania / Դ.Դ. ընդդեմ Լիտվայի, 13469/06-----12

ՀՈԴՎԱԾ 6 § 2

Անմեղության կանխավարկած

ժամանակավոր կալանքի տակ գտնվող պաշտոնյայի աշխատանքից ազատումը՝
անընդունելի

Tripon v. Romania / Տրիպոնն ընդդեմ Ռումինիայի, 27062/04-----12

ՀՈԴՎԱԾ 8

Պոզիտիվ պարտավորություններ

Անձնական կյանքը հարգելու իրավունք

Ներպետական դատարանների կողմից հայտնի զույգին առանց իրենց տեղեկացնելու
նկարահանված լուսանկարի հետագա տպագրության արգելման հրաման արձակելու
մերժում՝ խախտում չկա

*Von Hannover v. Germany (no. 2) / Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի, (թիվ 2)
40660/08 և 0641/08*-----12

Պոզիտիվ պարտավորություններ

Հաշմանդամ անչափահասի նկատմամբ ծնողական իրավունքի մասին դատաքննության
ծախողում՝ խախտում

A.M.M. v. Romania / Ա.Մ.Մ ընդդեմ Ռումինիայի, 2151/10-----12

Անձնական կյանքը հարգելու իրավունք

Դիմումատուի անձնական տվյալների հափշտակում՝ իշխանությունների կողմից գողացված
վարորդական իրավունքի վկայականն անվավեր չճանաչելու արդյունքում՝ խախտում

Romet v. the Netherlands / Ռոմեյթն ընդդեմ Նիդեռլանդների, 7094/06-----12

Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Երեխայի բարձրագույն շահերի անբավարար ուսումնասիրության և Հաագայի Կոնվենցիայի
ըջանակներում անարդար վարույթը՝ խախտում

Karrer v. Romania / Կարերն ընդդեմ Ռումինիայի, 16965/10-----12

ՀՈԴՎԱԾ 10

Արտահայտվելու ազատություն

Հայտնի դերասանի ձերբակալության և դատապարտման մասին հայտնելու արգելքը՝ խախտում

Axel Springer AG v. Germany / Աքսել Սփրինգեր ԱԳ-ին ընդդեմ Գերմանիայի, 39954/08-----12

Դատապարտումներ՝ դպրոցում հոմոֆոբիական թերթիկներ տարածելու համար՝ խախտում չկա

Vejdeland and Others v. Sweden / Վեյդելանդը և այլքը ընդդեմ Շվեդիայի, 1813/07-----12


Դատապարտում՝ զրպարտության համար. պետությանը պատկանող հեռուստատեսության
հետ անձնական նամակագրության ժամանակ պետական գործչի նկատմամբ անհիմն
հայտարարությունների համար ներողություն հրապարակելու կարգադրություն՝ խախտում չկա

Gasior v. Poland / Գասիերն ընդդեմ Լեհաստանի, 34472/07-----12

ՀՈԴՎԱԾ 13

Արդյունավետ պաշտպանություն

Բաց ծովում հայտնաբերված միգրանտներին բողոքարկման իրավունքից զրկելը և նրանց



վերադարձը ծագման երկիր՝ խախտում
Hirsi Jamaa and Others v. Italy / Հիրսի Ջամասան և այլոք ընդդեմ Իտալիայի, 27765/09-----12

Ապաստանի իրավունք խնդրողի արդյունավետ բողոքարկման միջոցի սահմանափակում՝ խախտում
I.M. v. France / Ի.Մ. ընդդեմ Ֆրանսիայի, 9152/09-----12

ՀՈԴՎԱԾ 14

Խտրականություն (Հոդված 8)

Չամուսնացած համասեռամուլ զուգընկերոջ՝ ընտանիքի անդամ մնալու պահանջի
չբավարարում՝ հաղորդակցված
Tadeucci and McCall v. Italy / Տադեուչին և այլոք ընդդեմ Իտալիայի, 57412/08-----12

Խտրականություն (Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված)

Հողի սեփականատիրոջ պահանջը՝ թույլատրել որսորդություն իր տարածքում՝ փոխանցում
Մեծ Պալատին
Chabauty v. France / Չաբոտին ընդդեմ Ֆրանսիայի, 57412/08-----12

ՀՈԴՎԱԾ 46

Պիլոտային վճիռներ

Վճիռ կատարումը

Եվրոպական դատարանի որոշումը՝ վերականգնել Ուկրաինիայում ներպետական
դատարանների վճիռների չկատարման վերաբերյալ գանգատների քննությանը՝
Yuriy Nikolayevich Ivanov v. Ukraine / Յուրի Իվանովն ընդդեմ Ուկրաինիայի, 40450/04-----12

Ընդհանուր միջոցներ

Պատասխանող պետությունից պահանջվում է ներկայացնել հստակ ժամկետներ և
իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ուղղված սեփականության
վերականգնման կառուցվածքային խնդրին
Mutishev and others v. Bulgaria / Մուտիշևը և այլոք ընդդեմ Բուլղարիայի, 18967/03-----12

Թիվ 4 Արձանագրության 4-րդ հոդված

Օտարերկրացիների խմբակային արտաքսման արգելում

Բաց ծովում հայտնաբերված միգրանտների վերադարձը ծագման երկիր՝ Թիվ 4
Արձանագրության 4-րդ հոդվածի կիրառում, խախտում
Hirsi Jamaa and Others v. Italy / Հիրսի Ջամասան և այլոք ընդդեմ Իտալիայի, 27765/09-----12

ՀՈԴՎԱԾ 3

Խոշտանգում

Հաշմանդամություն առաջացած ոստիկանության վատ վերաբերմունքից՝ խախտում

Savin v. Ukraine
Սավինն ընդդեմ Ուկրաինայի
34725/08, Վճիռ/ 16.2.1012
[5-րդ բաժանմունք]

Փաստեր

1999թ. հոկտեմբերին դիմումատուին խարդախության գործի առնչությամբ հրավիրվել է որպես վկա: Նա պահվել է ոստիկանության բաժանմունքում մինչև հաջորդ առավոտ, որտեղ ենթարկվել է առանձնակի դաժանությամբ ծեծի՝ հարվածներ գլխին, որի հետևանքով ներկայումս նա հաշմանդամ է: Սույնի հետևանքով նրա մոտ առաջացել է զգայարանների և շարժողական օրգանների գործողության քայքայում և ջղաձգության անգործունակություն: Ազատ արձակվելով՝ դիմումատուն դատախազության մարմիններին մի շարք բողոքներ է ներկայացրել՝ ոստիկանության կողմից իրեն անօրինական ձերբակալելու և խոշտանգելու վերաբերյալ: Դատախազը, սակայն, ոստիկանության աշխատակցի նկատմամբ, ում դեմ դիմումատուն վատ վերաբերմունքի մեղադրանքներ էր ներկայացրել պաշտոնեական լիազորությունների չարաշահման մեղադրանքով, զուգորդված դաժան և նվաստացուցիչ վերաբերմունքով, քրեական գործ է հարուցել միայն 9 տարի անց՝ 2008թ.-ին:

Քննությամբ պարզվել է, որ ոստիկանության աշխատակիցը դիմումատուին ազատությանից զրկել է կեղծ ցուցմունքների հիման վրա, կապել է դիմումատուի ձեռքերը հետևում և նրան շարունակական ծեծի է ենթարկել՝ հարվածելով գլխին և մարմնին՝ նպատակ ունենալով ստիպել դիմումատուին ցուցմունք տալ: Ոստիկանության աշխատակցին առաջադրված մեղադրանքով մեղավոր են ճանաչել, բայց վաղեմության ժամկետներն անցնելու պատճառով քրեական պատասխանատվության կամ պատժի չեն ենթարկել: Դատարանը նաև որոշել է դիմումատուի քաղաքացիական հայցը թողնել առանց քննության: Քրեական գործի քննության ժամանակ ոստիկանության աշխատակցի պաշտոնեական լիազորությունները ժամանակավորապես կասեցվել են, սակայն ավելի ուշ դրանք վերականգնվել են:

ՕՐԵՆՔ

3-րդ հոդված
(ա) Խոշտանգում. Ոստիկանության կողմից դիմումատուին պատճառած վատ վերաբերմունքի փաստն անվիճելի էր: Ոստիկանության բաժանմունքում երկու օր գտնվելու ընթացքում դիմումատուին պատճառած վերաբերմունքին գնահատական տալու համար Դատարանը հիմնվել է ներպետական քննության և բժշկական փորձագետների եզրակացությունների վրա: Դրանք բավական էին Դատարանի համար եզրակացնելու, որ դիմումատուն խոշտանգման է ենթարկվել: Վերոհիշյալի համար էական ապացույցներ են հանդիսացել վատ վերաբերմունքի դաժանությունը, որը դիմումատուի համար առաջացրել է առողջության այնպիսի քայքայում, որ նա դարձել է հաշմանդամ և

որի իրական նպատակը եղել է ցուցմունք կորզելը:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

(բ) *Հեղաքննություն.* Դիմումատուի կողմից ներկայացրած խոշտանգման կապակցությամբ մեղադրանքների վերաբերյալ գործը տևել է ավելի քան տասը տարի, որի ընթացքում քննիչները վեց անգամ մերժել են ոստիկանության աշխատակցի նկատմամբ քրեական գործ հարուցել: Այս բոլոր որոշումները հետագայում դատախազության բարձրաստիճան մարմինների կողմից բեկանվել են:

Ինչպես որ Դատարանը եզրակացրել է իր նախորդ գործերում, քննիչների կողմից բարձրաստիճան դատախազների ցուցումների նկատմամբ ցուցաբերած անգործության արդյունքում կրկնվող բացթողումները համակարգային խնդիրների արդյունք է: Ոստիկանության աշխատակցին մեղավոր ճանաչելով՝ նրան որևէ քրեական պատասխանատվության կամ պատժի չեն ենթարկել և նրա պաշտոնեական լիազորությունները ժամանակավոր են կասեցրել: Քննությունը որևէ կերպ չի խոչընդոտել ոստիկանության աշխատակցի աշխատանքային գործունեությանը, հակառակը՝ նրան ամենաքիչը երկու անգամ պարգևատրել են աշխատանքի բարձրացմամբ և նա մինչև այժմ աշխատում է ոստիկանությունում: Իրավիճակից պարզ է դառնում, որ որևէ էական գործողություն չի կատարվել հետագայում նմանատիպ խախտումները կանխելու նպատակով և, որ իրավապահ մարմինները վերացական կարգով օժտված են եղել անձեռնմխելիությամբ: Այսպիսով պետությունը անգործության է մատնել իր լիազորությունները, և ոստիկանության աշխատակցի կողմից

իրականացրած խոշտանգման վերաբերյալ դիմումատուի մեղադրանքի մասով արդյունավետ քննություն չի իրականացրել:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Դատարանը նաև միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5§1 հոդվածի խախտում:

Հոդված 41

1,800 եվրո որպես նյութական վնասի հատուցում և 40,000 եվրո որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Անմարդկային/Նվաստացուցիչ վերաբերմունք

Չորս տարիների ընթացքում շիզոֆրենիայով տառապող բանտարկյալի պարբերաբար տեղափոխումը մեկ հոգեբուժական հիվանդանոցից մեկ ուրիշը՝ խախտում

G. v. France
Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի
27244/09, Վճիռ /23.2.2012
[5-րդ բաժանմունք]

Փաստեր

Դիմումատուն, ով տառապել է շիզոֆրենիա տիպի քրոնիկ պսիխոզով, ներկայումս ներգրավված է հատուկ բժշկական հաստատությունում: 1996թ.-ից մինչ 2004թ.-ն ընկած ժամանակահատվածներում նա հաջորդաբար անցկացրել է բանտախցում և հոգեբուժարանում: 2005թ.-ի օգոստոսին, դիմումատուն այրում է իր բանտախուցը, որը կիսում էր մեկ այլ դատապարտյալի հետ: Վերջինս ստացած վնասվածքներից չորս ամիս անց մահանում է: 2005թ.-ի

հոկտեմբերին դիմումատուն մեղադրվում է և ժամանակավոր կալանքի տակ առնվում: Փաստաբանը դիմում է նրան ազատ արձակելու համար՝ հիմնավորելով, որ իր պաշտպանյալը պահվում է բժշկական և պատիժ կրելու համար չնախատեսված հաստատությունում, որը դատավորը մերժում է: 2007թ.-ի փետրվարին, դիմումատուն կանգնում է դատարանի առաջ և մեղադրվում: 2007թ.-ից մինչ 2008թ. նա բազմաթիվ անգամ հոսպիտալացվում է՝ տեղափոխվելով կալանավայրի բժշկահոգեբուժական ծառայություն և հատուկ մասնագիտացված բժշկական հաստատություն: 2008թ.-ի նոյեմբերին, առաջին ատյանի դատարանի նախագահի կողմից պահանջված հոգեբուժական փորձաքննությունը եզրակացնում է, որ չնայած նրա խանգարումներին դիմումատուն կարող է կանգնել դատարանի առաջ: 2008թ.-ի նոյեմբերի վճռով դատարանը նրան դատապարտում է 10 տարվա ազատազրկման:

Վճռի հրապարակումից հետո նա նորից տեղափոխվում է կալանավայրի բժշկահոգեբուժական ծառայություն: 2008թ.-ի դեկտեմբերին, պրեֆեկտը որոշում է ընդունում դիմումատուին հոսպիտալացնելու վերաբերյալ, որը պետք է տևեր երեք ամիս: Այնուհետև, նա նորից տեղափոխվում է կալանավայրի շրջանային բժշկահոգեբուժական ծառայություն: Դիմումատուն ազատ արձակման նոր դիմում է ներկայացնում հիմնավորելով այն հանգամանքը, որ անվերջ տեղափոխումները կալանավայրի բժշկահոգեբուժական ծառայությունից հատուկ մասնագիտացված հոսպիտալ անմարդկային և ստորացնող վերաբերմունք են ենթադրում, իսկ կալանավայր տեղափոխումը՝ խոշտանգման տարատեսակ

է հիշեցնում: 2009թ.-ի սեպտեմբերին առաջին ատյանի դատարանը դիմումատուին ճանաչում է անմեղսունակ և կարգադրում վերջինիս հոսպիտալացնել հատուկ մասնագիտացված հիվանդանոցում:

ՕՐԵՆՔ

Հոդված 3

Այն, որ դիմումատուն տառապում է ծանր հիվանդությամբ, անվիճելի է: Դա շիզոֆրենիայի տիպի քրոնիկ պսիխոզ է, հայտնի է ինքնասպանության տանող բարձր ռիսկով և պահանջում է շարունակական բուժում: Ազատազրկման ժամանակահատվածում դիմումատուն բազմիցս ունեցել է առողջական վատթարացումներ: Ուստի Դատարանը գտնում է, որ այն տառապանքները, որոնք կապված են եղել շիզոֆրենիա հիվանդության վատթարացման հետ, սկզբունքորեն կարող են առաջ բերել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Սույն դեպքում, Դատարանը հաշվի է առնում, որ ազատազրկման բոլոր չորս տարիների ընթացքում դիմումատուին հատկացվել է բժշկական խնամք և նա բուժում է ստացել:

Առաջնահերթ Դատարանը համարում է անհարիր կրկնվող և կարճատև հոսպիտալացումները և դրանց հաճախականությունը, ընդգծելով դիմումատուի ծանր և քրոնիկ հոգեկան խնդիրները: Այս պայմաններում դրանք իզուր և անտեղի էին արվում, իսկ դիմումատուի համար անհասկանալի և անհանգստացնող էին: Դրանք նույնիսկ ակնհայտորեն խոչընդոտում էին դիմումատուի վիճակի կայունացմանը, ցույց տալով, որ վերջինս ի վիճակի չէ կրել

ազատագրված ան ապահով, ինչն էլ իր հերթին առաջ է բերում 3-րդ հոդվածի խախտում: Երկրորդ հերթին Դատարանը վկայակոչում է դիմումատուի կալանավայրի պայմանները, երբ նա տեղափոխվել է շրջանային բժշկահոգեբուժական ծառայություն, ուր նա տեղափոխվել է բազմաթիվ անգամներ, մինչդեռ այդ վայրը ազգային իշխանությունների կողմից խիստ քննադատությունների է ենթարկվել: Համակցված բանտային կոշտ միջավայրի հետ, սույն պայմանները կարող էին միայն խորացնել նրա մտահոգությունները, տագնապի և վախի զգացողությունները: Հաշվի առնելով իշխանությունների բոլոր ջանքերը, որպեսզի հոգ տարվի դիմումատուի մտավոր խնդիրների մասին, Դատարանը գտնում է, որ դիմումատուին նման պայմաններում և բավական երկար ժամանակ պահելը (2005թ.-ից մինչ 2009թ.) խոչընդոտել է նրա բուժման ընթացքին և առաջ է բերել ազատագրվումից բխող անխուսափելի տառապանք: Հետևաբար, Դատարանը սույն դեպքը որակում է որպես անմարդկային և ստորացնող վերաբերմունք:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

Դատարանը հիշեցնում է, որ ըստ 2006թ. Եվրոպական Բանտային Կանոնակարգի, այն դատապարտյալները, ովքեր տառապում են հոգեկան ծանր խնդիրներով պետք է տեղավորվեն և խնամքի տակ առնվեն հատուկ կենտրոնում, որը հարմարեցված կլինի հատուկ համապատասխան սարքավորումներով և որը կունենա համապատասխան անձնակազմ (տե՛ս *Stawomir Musiał v. Poland*, no 28300/06, 20 հունվար 2009, Տեղեկատվական նոթ՝ թիվ 115):

Դատարանը միաձայն եզրակացնում է նաև, որ դիմումատուի դատական գործընթացը Կոնվենցիայի 6 § 1 հոդվածով չի խախտվել:

Հոդված 41

10,000 Եվրո որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Արտաքսում

Բաց ծովում հայտնաբերված միգրանտների վերադարձը ծագման երկիր՝ խախտում

Hirsi Jamaa and Others v. Italy
Հիրսի Յամաա և այլոք ընդդեմ Իտալիայի
 27765/09, Վճիռ 23.2.2012 [ՄՊ]

Փաստեր

Դիմումատուները տասնմեկ սոմալացի և տասներեք էրիթրեացիներ են: Նրանք մոտավորապես 200 անձանցից բաղկացած խմբի մի մասն են կազմում, ովքեր 2009թ. երեք նավերով լքում են Լիբիան՝ Իտալիա տեղափոխվելու նպատակով: 2009թ.-ի մայիսի 6-ին, երբ դեռ նավերը գտնվում էին Մալթայի իրավագործության տակ գտնվող փրկարարական ծովային գոտում, նրանց մոտենում են իտալական ֆինանսական և ավիամերձ պաշտպանության նավերը: Նավերում գտնվողները տեղափոխվում են իտալական ռազմական նավեր, ապա՝ Տրիպոլի:

Դիմումատուները պնդել են, որ ճանապարհորդության ժամանակ, իտալական իշխանությունները իրենց չեն տեղեկացրել, թե ինչ ուղղությամբ են տանում, չեն կատարել նաև ինքնությունը հաստատող ոչ մի գործողություն: Տասը ժամ նավարկումից հետո, հասնելով Տրիպոլիի

նավահանգիստ, միգրանտները հանձնվում են լիբիական իշխանություններին: Ըստ դիմումատուների, իրենք հրաժարվել են հանձնվել լիբիական իշխանություններին, սակայն ուժի կիրառմամբ նրանց պարտադրվել է լքել իտալական նավերը:

Հաջորդ օրը, մամլո ասուլիսի ժամանակ, Իտալիայի ներքին գործերի նախարարը, հաստատում է, որ բաց ծովում ներգաղթյալների հայտնաբերման և Լիբիա վերադարձի գործողությունները 2009թ.-ի փետրվարին ուժի մեջ մտած Լիբիայի հետ միջպետական համաձայնության շրջանակներում են և կարևոր բաղադրիչ են հանդիսանում անօրինական միգրացիայի դեմ պայքարի գործընթացում:

Այս խառը իրավիճակում, երկու դիմումատուներ անհասկանալի հանգամանքներում մահանում են: 2009թ.-ի հունիս և հոկտեմբեր ամիսների ընթացքում տանչորս դիմումատուներ Տրիպոլիի ոստիկանության փախստականների բյուրոյից (HCR) ստանում են փախստականի կարգավիճակ: 2011թ.-ի փետրվարի Լիբիայի ապստամբությունից հետո դիմումատուների և նրանց ներկայացուցիչների միջև հարաբերությունների սառում են: Ներկայումս փաստաբանները շարունակում են կապը վեց դիմումատուների հետ, որոնցից չորսն ապրում են Բենինում, Մալթայում կամ Շվեյցարիայում՝ սպասելով իրենց դիմումների միջազգային-իրավական մեխանիզմներով նախատեսված պաշտպանության արդյունքներին: Դիմումատուներից մեկը գտնվում է Թունիսում՝ փախստականների ճամբարում և նախատեսում է Իտալիա մեկնել: 2011թ.-ի հունիսին, ևս անօրինական կերպով Իտալիա մտած փախստականներից մեկին շնորհվում է փախստականի կարգավիճակ:

ՕՐԵՆՔ

Հոդված 1

Իտալիան չի առարկում, որ դիմումատուներով բեռնված նավերը լիարժեքորեն գտնվում են իր իրավասության շրջանակներում:

Դատարանը հիշեցնում է միջազգային իրավունքի սկզբունքները՝ արտացոլված նաև իտալական Ծովային օրենսգրքում՝ բաց ծովում գտնվող նավը ենթարկվում է բացառապես այն երկրի օրենսդրությանը, որի դրոշը կրում է: Դատարանը չի կարող հաշվի առնել ոչ Կառավարության կողմից առաջ քաշված «բաց ծովի փրկարարություն» որակումը, ոչ էլ դիմումատուների հանդեպ իրականացված հսկողության չափավոր մակարդակը՝ փաստերը նկարագրելու համար: Գործողություններն ամբողջությամբ տեղի են ունեցել իտալական զինված ուժերի նավի տարածքում, որի անձնակազմը կազմված էր բացառապես ազգային ուժերից: Նրանց նավ նստեցնելուց մինչև լիբիական իշխանություններին հանձնելը դիմումատուները գտնվել են իտալական իշխանությունների շարունակական և բացարձակ հսկողության տակ: Հետևաբար, փաստերը, որոնցից բխում են ենթադրյալ բռնությունները գտնվում են իտալական պատասխանատվության ներքո, ինչը բխում է Կոնվենցիայի 1-ին հոդվածից:

Եզրահանգում՝ գտնվում է իրավասության ներքո (միաձայն):

Հոդված 3

ա) Լիբիայում կոպիտ վերաբերմունքի ենթարկվելու սպառնալիք՝ Դատարանը, հաշվի առնելով ներգաղթյալների,

մասնավորապես ծովային շրջաններում աճող ներհոսքը, որը ճնշում է հանդիսանում պետությունների վրա, այնուամենայնիվ գտնում է, որ այդ իրավիճակը նրանց չի ազատում այն պարտավորություններից, որ անձին չվերադարձնեն ծագման երկիր, որտեղ նրան սպառնում է 3-րդ հոդվածից բխող վտանգ: Նշելով այն մասին, որ 2010թ.-ի ապրիլից ի վեր Լիբիայում իրավիճակն այս ոլորտում վատթարացել է, Դատարանը, գործը քննելու համար, այս պարագայում առաջնորդվում է ըստ փաստերի առկայության: Այս առումով նա նշում է, որ անօրինական ներգաղթյալների նկատմամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ բազմաթիվ կազմակերպությունների անհանգստացնող եզրակացությունները ներառված են 2010թ.-ին հրապարակված ԽԿԿ՝ զեկույցում:

Անկանոն իրավիճակում գտնվող ներգաղթյալները և ապաստան խնդրողները ենթարկվելով ոչ հստակ վերաբերմունքի, պարբերաբար ձերբակալվում էին, կալանավորվում, և այս ամենը այնպիսի պայմաններում, որ դիտորդները դրանք որակում էին անմարդկային՝ բերելով նույնիսկ որոշ խոշտանգման օրինակներ: Ամեն պահի լինելով ծագման երկիր վերադարձվելու վտանգի մեջ, անօրինական ներգաղթյալները, եթե գտնվում էին ազատության մեջ, ապրում էին անապահով իրավիճակում և ենթարկվում էին ռասսայական խտրականությունների: Իտալական Կառավարությունը, շարունակում է հաստատել, որ Լիբիան ապահով վայր է միգրանտների համար և որ այդ երկիրը կհարգի իր կողմից ստանձնած ապաստանի և փախստականների պաշտպանության վերաբերյալ միջազգային պարտավորությունները:

Դատարանն ընդգծում է, որ ներպետական օրենքների առկայությունը և միջազգային պայմանագրերի վավերացումը, որոնք երաշխավորում են հիմնարար իրավունքների հարգանքը, բավարար չեն, որպեսզի համապատասխան պաշտպանություն ապահովեն, երբ հուսալի աղբյուրներից հայտնի է դառնում, որ պրակտիկայում իրականացվում են Կոնվենցիայի սկզբունքներին հակասող գործողություններ: Ուստի, Իտալիան, չի կարող խուսափել Կոնվենցիայի հանդեպ ստանձնած իր պարտավորություններից՝ վկայակոչելով իր ներքին պարտավորությունները, որ ձեռք է բերել Լիբիայի հետ միջպետական համաձայնագրի շրջանակներում: Մինչդեռ, Իտալիան, չի կարող խուսափել Կոնվենցիայի հանդեպ ստանձնած իր պարտավորություններից՝ վկայակոչելով իր ներքին պարտավորությունները, որ ձեռք է բերել Լիբիայի հետ միջպետական համաձայնագրի շրջանակներում:

Լիբիայում փախստականների գործերով ուստիկանության գրասենյակը, որը գտնվում է Տրիպոլիում, երբեք չի ճանաչվել այդ երկրի կառավարության կողմից: Այս փաստը Լիբիայում արդեն հայտնի էր և սույն հանգամանքներում Իտալիայի կառավարությանը գիտեր, կամ պետք է իմանար, որ դիմումատուների հեռացման պահին նրանք ծագման երկրում ենթարկվելու էին վատ վերաբերմունքի, ինչը հակասում էր Կոնվենցիային:

Այնուհանդերձ, այն փաստը, որ դիմումատուները որոշակի կերպով չեն ներկայացրել ապաստանի դիմումը, Իտալիային չի ազատում պատասխանատվությունից: Դատարանը հիշատակում է փախստականների վերաբերյալ պետությունների միջազգային

պարտավորությունների մասին: Դատարանը նաև գտնում է, որ դիմումատուների ընդհանուր իրավիճակը, նրանց սպառնացող ենթադրյալ վտանգը, այն որ իտալական իշխանություններին հայտնի էր եղել, որ նրանց Կոնվենցիայով արգելված վերաբերմունք էր սպասվում՝ վերջիններիս Լիբիա տեղափոխելիս:

Եզրահանգում՝ խախտում (միաձայն):

բ) *Վտանգ, որ դիմումատուները ծագման երկրում վաղ վերաբերմունքի կենթարկվեն՝* օտարերկրացու տարանցիկ երկրով վերադարձը ծագման երկիր չի ազատում դա իրականացնող պետությանը պատասխանատվությունից, վերջինս նախ պետք է համոզված լինի, որ տարանցիկ երկիրն ունի երաշխիքներ՝ կամայական վերադարձի դեմ, հատկապես եթե այդ երկիրը Կոնվենցիայի կողմ չի հանդիսանում: Դատարանի ունեցած ամբողջական տեղեկատվությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ Սոմալիում և Էրիթրեայում համընդհանուր անապահով իրավիճակ է տիրում. խոշտանգումներ, անմարդկային պայմաններում կալանավորումներ՝ միայն այն փաստի համար, որ անձը անօրինական կերպով լքել է երկիրը: Ուստի դիմումատուները կարող էին հաստատել, որ իրենց վերադարձը ծագման երկիր առաջ է բերում 3-րդ հոդվածի խախտում: Այնուհետև Դատարանը փորձել է համոզվել, թե արդյոք իտալական իշխանությունների սպասելիքները ողջամիտ էին՝ Լիբիայի ներկայացրած կամայական հայրենադարձության երաշխիքների բավարար լինելու մեջ: Նկատելով այն հանգամանքը, որ այս երկիրը չի վավերացրել փախստականների վերաբերյալ Ժնևի Կոնվենցիան, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ այս երկրում

բացակայում է փախստականների պաշտպանության և ապաստան տրամադրելու որևէ գործընթաց, Դատարանը համոզիչ չի համարում այն փաստարկը, ըստ որի Տրիպոլիի փախստականների գործերով ոստիկանության բաժինը երաշխիք է հանդիսանում՝ կամայական հայրենադարձությունից խուսափելու համար: Եղել են փախստականների և ապաստան խնդրողների հարկադիր վերադարձի դեպքեր դեպի վտանգ ներկայացնող երկրներ, որոնք ի դեպ դատապարտվել են Human Rights Watch-ի և փախստականների հարցերով ոստիկանության կողմից: Այսպիսով, որոշ դիմումատուների կողմից, Լիբիայում փախստականի կարգավիճակի ստացումը, հեռու է հուսադրող համարվելուց, և հանդիսանում է դիմումատուների խոցելիությունը ապացուցող հավելյալ փաստ:

Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուներին դեպի Լիբիա տեղափոխելու ժամանակ իտալական իշխանությունները գիտեին, կամ պետք է իմանային այն մասին, որ չկան բավարար երաշխիքներ այն վտանգի դեմ, որ դիմումատուները կամայականորեն կվերադարձվեն ծագման երկիր:

Եզրահանգում՝ խախտում (միաձայն):

Թիվ 4 Արձանագրության 4-րդ հոդված

ա) *Ընդունելիություն՝* Դատարանն առաջին անգամ պետք է ուսումնասիրի այս հոդվածի կիրառելիությունը՝ օտարերկրացիներին ոչ թե ծագման, այլ երրորդ երկիր տեղափոխելու դեպքում: Քննվել է, թե արդյոք դիմումատուներին դեպի Լիբիա տեղափոխումը համարվում է այդ դրույթով սահմանված զանգվածային վտարում:

Դատարանը նկատում է, որ ոչ օրենքը, ոչ Կոնվենցիայի նախապատրաստական աշխատանքները չեն հակասում այս հոդվածի արտատարածքային կիրառելիությանը: Բացի այդ, դրա կիրառելիությունը անդամ պետությունների ազգային տարածքից զանգվածային վտարումների դեպքերում կվերացնի ժամանակակից միգրացիոն ֆենոմենների մի զգալի մաս և կսահմանափակի հաճախ իրենց կյանքի ռիսկի հաշվին բաց ծովի ճանապարհը բռնած ներգաղթյալների թիվը:

Արտաքսման գաղափարը, ինչպես նաև «օրենսդրություն» գաղափարը, հիմնականում կապված են ազգային տարածքի հետ: Այնուամենայնիվ, այնտեղ, որտեղ Դատարանը ճանաչում է, որ պետությունը գործադրել է իր օրենսդրությունը իր ազգային սահմաններից դուրս, ինչպես սույն գործում է, նա կարող է համարել, որ այդ երկրի օրենսդրության արտատարածական կիրարկումը ընդունել է համընդհանուր արտաքսման ձև:

Բացի այդ, ծովային միջավայրի յուրահատկությունը չի կարող հանգեցնել անիրավչության այդ տարածքում, որտեղ անհատները չեն կարողանա օգտվել մի իրավական ռեժիմից, որը նախատեսում է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներ: Ուստի Թիվ 4 Արձանագրության 4-րդ հոդվածը սույն գործում կիրառելի է:

Եզրահանգում՝ ընդունելի (միաձայն)

բ) *Ըստ էության քննություն՝* Դիմումատուների տեղափոխումը Լիբիա տեղի է ունեցել առանց նրանց անհատական իրավիճակների ուսումնասիրության: Ոչ մի անհատականացման գործընթաց իտալական իշխանությունների կողմից չի

իրականացվել, նրանք միայն դիմումատուներին նավ են բարձրացրել, այնուհետև Լիբիայում նավից իջեցրել: Դիմումատուների երկրից հեռացումը համընդհանուր բնույթի է եղել, որը հակասում է Թիվ 4 Արձանագրության 4-րդ հոդվածի հետ:

Եզրահանգում՝ խախտում (միաձայն):

Կոնվենցիայի 13-րդ հոդված համակցված 3-րդ հոդվածով և Թիվ 4 Արձանագրության 4-րդ հոդված՝ իտալական կառավարությունը ընդունում է, որ դիմումատուների անհատական իրավիճակների ուսումնասիրումը նախատեսված չի եղել ռազմական նավերի վրա, որոնցով նրանք տեղափոխվել են: Ի դեպ նավի անձնակազմում չի գտնվել ոչ թարգմանիչ, ոչ իրավաբանական խորհրդատու: Դիմումատուները պնդում են, որ ոչ մի տեսակի տեղեկատվություն չեն ստացել իտալական ռազմածովայինների կողմից, որի պատճառով նրանք կենթադրեին, թե Իտալիա են իրենց ուղեկցում: Իրադարձությունների այս տեսակետը, որն արժանանում է կառավարության առարկությանը բազմաթիվ հակափաստարկ վկայություններ ունի փախստականների գործերով ոստիկանության, խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի /ԽԿԿ/ և Human Rights Watch-ի կողմից, որոնց միանում է նաև Դատարանը:

Դատարանը այստեղ կարևորում է անձանց երաշխիքները՝ արտաքսման հետևանքով սպառնացող անջնջելի հետևանքների համար և իրենց բողոքը ներկայացնելու և արդյունավետ վարույթ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Ռազմածովայինների դեմ քրեական վարույթ սկսելու անհասանելիությունը առաջ է բերում 13-րդ հոդվածի խախտում: Այսպիսով դիմումատուները մինչ իրենց արտաքսման գործընթացը սկսելը զրկված են եղել համապատասխան մարմին իրենց բողոքը ներկայացնելու որևէ դատական պաշտպանության միջոցից:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 46

Իտալական կառավարությունը պետք է պարտավորվի ձեռնարկել ամեն հնարավոր քայլ, որպեսզի լիբիական իշխանություններից հավաստիացում ստանա, որ դիմումատուները ոչ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված վերաբերմունքի կարժանանան, ոչ էլ կամայական արտաքսման:

Հոդված 41

15,000 եվրո փոխհատուցում յուրաքանչյուր դիմումատուին՝ ոչ նյութական վնասի համար:

ՀՈԴՎԱԾ 5

Հոդված 5 § 1

**Ազատագրվում՝
նախատեսված օրենքով_____**

Կասկածյալի ձերբակալման ժամանակ օրենսդրական ընթացակարգին չհետևելը՝ խախտում

Creanga v. Romania
Կրեանգան ընդդեմ Ռումինիայի
29224/03, Վճիռ/ 23.2.1012 [ՄԴ]

Փաստեր

1995թ.-ից ի վեր դիմումատուն աշխատել է որպես ոստիկանության սպա: 2003թ.-ի հուլիսի 16-ին իր վերադասից տեղեկանալով, որ պետք է ներկայանա հակակոռուպցիոն ազգային ծառայություն /PNA/ հարցաքննության ենթարկվելու համար, այնտեղ է ներկայանում առավոտյան ժամը 09-ին: Ժամը 10-ին դատախազը նրան հարցաքննում է: Նա այնտեղ պահվում է մինչ ժամը 20-ը, որտեղ էլ նրան հայտնի է դառնում, որ կասկածվում է կաշառակերության մեջ: Այնուհետև, դիմումատուն ժամանակավոր կալանքի տակ է առնվում՝ 2003թ.ի հուլիսի 16-ի դատախազության կարգադրությամբ՝ ժամանակավորապես դադարեցնելով նրա պաշտոնեական լիազորությունները: Կարգադրության մեջ նշվում էր, որ դիմումատուի դեմ իրականացվող միջոցառումը նախատեսում է երեք օր՝ 2003թ.-ի հուլիսի 16-ի ժամը 22-ից մինչ 2003թ.-ի հուլիսի 18-ի ժամը 22-ը: 2003թ.-ի հուլիսի 18-ին առաջին ատյանի զինվորական դատարանը 27 օրով երկարաձգում է ժամանակավոր կալանքի ժամկետը: Նույն օրը երկարացվում է նաև լիազորությունների դադարեցման ժամկետը՝ նույն հիմքով, որը առկա էր 2003թ.-ի հուլիսի 16-ի հրամանում: 2003թ.-ի հուլիսի 21-ին, Գերագույն դատարանը իրավունք է տալիս բողոքարկելու առաջին ատյանի դատարանի վճիռը, այնուհետև այն անվավեր է համարում և կարգադրում ազատ արձակել դիմումատուին: Նույն օրը վերջինս ազատ է արձակվում: Այնուհետև, գլխավոր դատախազը բողոքարկում է առաջին ատյանի վճիռը չեղյալ համարելու մասին Գերագույն Դատարանի վճիռը: 2003թ.-ի հուլիսի 25-ին ինը դատավորի կազմով

վերջնական վճիռ է կայացվում, բեկանվում է 2003թ.-ի հուլիսի 21-ի վճիռը և տրվում բողոքարկման իրավունք:

2003թ.-ի հուլիսի 25-ին դիմումատուն ժամանակավոր կալանքի է վերցվում: 2004թ.-ին առաջին ատյանի ռազմական դատարանը կարգադրում է ազատ արձակել դիմումատուին՝ փոխարինելով ժամանակավոր կալանքը երկիրը լքելու արգելքով:

2010թ.-ի հունիսի 15-ի վճռով եվրոպական Դատարանը միաձայն 5 § 1 հոդվածի խախտում է ճանաչում 2003թ.-ի հուլիսի 16-ին ժամը 10-ից մինչ 22-ը դիմումատուին առանց օրինական հիմքի ազատազրկելու և 2003թ.-ի հունիսի 25-ին վճիռը չեղյալ համարելու բողոքարկմամբ դիմումատուին կալանավորելու մասով, ինչպես նաև 5 § 1 հոդվածի ոչ խախտում՝ 2003թ.-ի հուլիսի 16-ից 18-ը նրա ժամանակավոր կալանքի համար հիմքերի բացակայության մասով:

ՕՐԵՆՔ

Հոդված 5 § 1

Չի առարկվել այն հանգամանքը, որ դիմումատուն հրավիրվել է ներկայանալու հակակոռուպցիոն ազգային դատախազություն և որ նա մտել է այդ հաստատություն առավոտյան ժամը 09-ին քրեական գործի անհրաժեշտությունից ելնելով: Հարկավոր է ընդունել, որ դիմումատուն հենց այդ պահից սկսած անցել է իշխանությունների հսկողության տակ: Հետևաբար, կառավարությունն է, որ պետք է բացատրություններ տա այն բանի վերաբերյալ թե ինչ է տեղի ունեցել հակակոռուպցիոն ազգային դատախազությունում:

Այս գործողություններն ակնհայտորեն ուղղված էին լայն ծավալում ունեցող քրեական գործի բացահայտմանը, այն է՝ նավթամթերքի առուվաճառքով զբաղվող մի

ցանցի կազմալուծմանը: Ուստի, դիմումատուի և նրա համագործակից ընկերների հանդեպ իրականացվող հետապնդումը ուղղված էր այս գործողությանը և մեկ օրվա ընթացքում կատարել բոլոր այդ գործողությունները նրան ազատազրկելու միջոցով բխում էին գործի բացահայտման անհրաժեշտությունից:

Ընդհանրացնելով այս ամենը, մի կողմից հայտնի է դառնում կառավարության բերած համապատասխան և համոզիչ փաստարկներն իր կողմից իրականացված գործողություններն արդարացնելու համար՝ ներառելով այն իրողությունը, ըստ որի դիմումատուն պետք է կարողանար դուրս գալ դատախազության շենքից և ազատ լինել իր կամքով լքելու այդ հաստատությունը, երբ առաջին անգամ ներկայացել էր դատախազություն, մյուս կողմից առկա է դիմումատուի ներկայացրած համապատասխանող և ճշմարտանման տարբերակը, որում նա ասում է, որ ինքը պահվել է դատախազության շենքի ներսում և զրկված է եղել ազատությունից առնվազն ժամը 12-ից մինչ 22-ը:

Դիմումատուն հրավիրվել է ներկայանալու դատախազություն առանց տեղեկացվելու, թե ինչու է կանչվել: Մինչդեռ, ազգային օրենսդրությունը պարտադրում է, որպեսզի դատախազություն հրավիրված անձը տեղեկացվի թե ինչու է կանչվում և ինչում են նրան կասկածում: Դրան հետևում է այն հանգամանքը, որ դիմումատուն չգիտեր թե նրան հրավիրել էին որպես վկա թե կասկածյալ, նույնիսկ այն պարագայում, որ հենց ինքը ոստիկան էր և անձամբ էլ հետապնդումներ էր իրականացնում: Ամեն դեպքում, ըստ կառավարության ներկայացրած փաստերի, մոտավորապես ժամը 12-ին, երբ ոստիկանության բոլոր

աշխատակիցները իրենց հայտարարությունները գրել վերջացրել էին, դատախազը վերադառնում է աշխատանքային սենյակ, որպեսզի տեղեկացնի, որ սույն գործում քրեական հետապնդումը հարուցված է ներկա գտնվող ոստիկանության տասնաշխատակիցների դեմ, այդ թվում դիմումատուի, որ նրանք իրավունք ունեն ունենալու իրենց ընտրած փաստաբանը կամ նրանց այն կհատկացվի:

Առաջին անգամ դատախազություն ներկայանալիս դիմումատուն չգիտեր իր իրավական կարգավիճակի և այն երաշխիքների մասին, որ նա ուներ: Նույնիսկ եթե այս պայմաններում Դատարանը կասկածներ ունի դիմումատուի առաջին երեք ժամերին դատախազությունում առանց կարգավիճակ պահվելու հետ կապված 5 § 1 հոդվածով խախտված լինելու վերաբերյալ, ապա միևնույն է նա հաստատված է համարում, որ առնվազն ժամը 12-ից սկսած դիմումատուի նկատմամբ քրեական գործ է հարուցվել և հաստատվել է նրա քրեական կարգավիճակը:

Այդ պահից սկսած դիմումատուն անհերքելիորեն համարվել է կասկածյալ, այնպես որ 5 § 1 (գ) հոդվածի տեսանկյունից նրա ազատազրկման օրինականությունը պետք է ուսումնասիրվի հենց այդ պահից սկսած: Ժամը 12-ից սկսած դատախազը բավարար կասկածներ ուներ, որը կարդարացներ դիմումատուին ազատազրկման մեջ պահելը՝ հետապնդման անհրաժեշտությունից ելնելով: Ռումինական օրենքը այս իրավիճակի համար նախատեսում է նախնական կալանքի տակ առնել անձին, սակայն դատախազը այդ օրենքը կիրառում է բավականին ուշ, ժամը 22-ին մոտ:

Հետևաբար, 2003թ.-ի հուլիսի 16-ին առնվազն ժամը 12-ից մինչև ժամը 22-ը

դիմումատուին ազատությունից զրկելը ներպետական օրենսդրությամբ օրինական հիմք չի ունեցել:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

Դատարանը գտնում է, որ տեղի չի ունեցել 5§1(գ) հոդվածի խախտում՝ համարելով, որ 2003թ.-ի հուլիսի 16-ի ժամը 22-ից մինչև 2003թ.-ի հուլիսի 18-ի ժամը 22-ը դիմումատուի ազատազրկումը օրինական է եղել:

Բացի այդ, Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել 5§1 հոդվածի խախտում, քանի որ 2003թ.-ի հուլիսի 25-ին դիմումատուին անազատության մեջ պահելը ներպետական օրենսդրությամբ չունի բավարար օրինական հիմք՝ քանի որ այն նախատեսված չի եղել ոչ մի օրենքով:

Հոդված 41

8,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Հոդված 5 § 1 (գ)

Հիմնավոր կասկած _____

Կասկածյալի ձերբակալման ժամանակ օրենսդրական ընթացակարգին չհետևելը՝ խախտում

*Creanga v. Romania
Կրեանգան ընդդեմ Ռումինիայի
29224/03, Վճիռ/ 23.2.1012 [ՄՊ]*

(տե՛ս, վերը նշված հոդված 5 § 1, էջ 11)

Հոդված 5 § 1 (ե)

Տկարամիտ անձինք

Կամքին հակառակ ավելի քան յոթ տարի մտավոր հետամնաց դիմումատուի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելը՝ խախտում է կա

D.D. v. Lithuania
Դ.Դ. ընդդեմ Լիտվաի
13469/06, Վճիռ/14.2.2012
[2-րդ բաժանմունք]

Փաստեր

Դիմումատուն, որին ախտորոշել են շիզոֆրենիա, իր որդեգրված հոր պահանջով, որը հետագայում ճանաչվել է որպես իր խնամակալ, 2000թ. դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ: Հայրը համապատասխանաբար պահանջել է, որ դիմումատուին տեղավորեն մտավոր հետամնաց ունակություններով անձանց համար նախատեսված հաստատությունում, քանի որ, ինչպես վկայել էր սոցիալական աշխատողը, դիմումատուն ունակ չէր իր մասին ինքնուրույն հոգ տանելու: Հիմնվելով տեղական քաղաքային խորհրդից կազմված ժյուրիի որոշման վրա, որը հաստատվել է սոցիալական ծառայության կողմից, դիմումատուին 2004թ. հուլիսին, հակառակ իր կամքի, տեղավորում են վերը նշված հաստատությունում: Նրանք եզրակացրել են, որ դիմումատուն ունակ չի եղել հոգալու իր առաջնային կարիքները, չի հասկացել փողի արժեքը և ունեցել է պատահական պոռթկումներ:

2005թ. իր նախկին հոգեբուժի և իր ընկեր Դ.Գ.-ի օգնությամբ դիմումատուն խնամակալության գործընթացը վերսկսելու վերաբերյալ դիմում է ներկայացրել և Դ.Գ.-ն

նշանակել է որպես իր խնամակալ: Դիմումատուն պնդել է, որ նրան երբեք չեն ծանուցել կամ կանչել դատարան դատաքննության ներկայանալու համար, որտեղ նրան որդեգրած հայրը նշանակվել է որպես խնամակալ և որ նրա ու իրեն որդեգրած հոր հարաբերությունները շատ լարված են եղել և որ նրան տեղավորել են այդ հաստատությունում իր հոր նախաձեռնությամբ և որ իրեն անգործունակ են ճանաչել առանց իր գիտության: 2005թ. դատարանը դռնփակ դատաքննություն է անցկացրել, բայց մերժել է դիմումատուի՝ փաստաբան ունենալու պահանջը՝ հիմնավորելով, որ դիմումատուի շահերը կներկայացնի խնամակալի փաստաբանը: Դիմումատուն պնդում է, որ դատաքննության ընդմիջման ժամանակ նրան տարել են դատավորի մոտ և զգուշացրել են, որ որևէ բացասական արտահայտություն չասի իրեն որդեգրած հոր վերաբերյալ: Ընդմիջումից հետո դիմումատուն համաձայնում է, որ իրեն որդեգրած հայրը մնա որպես իր խնամակալ, բայց խնդրել է իրեն դուրս բերել այդ հաստատությունից: Հետևաբար, դատարանը մերժել է վերսկսել խնամակալություն վերաբերյալ գործը:

ՕՐԵՆՔ

(ա) Ընդունելիությունը

(i) Զոհի կարգավիճակը

Դիմումի բնօրինակը ստորագրվել է Դ.Գ.-ի կողմից առանց դիմումատուի ստորագրությունը կեղծելու որևէ մտադրության: Հետևաբար, նա փաստաբան է նշանակել, ով, ի պատասխան Կառավարության, իր քննությունների շրջանակներում շարունակել է դիմումատուի սկզբնական պահանջները: Այդ իսկ

պատճառով արդարացի է եզրակացնել, որ Դ.Դ.-ն դիմումատուի անունից դիմում ներկայացնելու իրավասություն է ունեցել և որ դիմումատուն իր դիմումում բարձրացրած գանգատների առնչությամբ կարող էր պահանջել, որ իրեն զոհ ճանաչեն:

Եզրակացություն՝ զոհի կարգավիճակի հաստատում (միաձայն):

(ii) Գանգատի իրավունքի չարաշահում

Իր գանգատի ձևի ենթադրյալ ոչ ճիշտ տեղեկատվության վերաբերյալ դիմումատուի՝ գանգատ ներկայացնելու իրավունքի ենթադրյալ չարաշահումը գործին սերտորեն կապված էր և, հետևաբար, միացվել է գործի ըստ էության քննությանը:

(բ) Ըստ էության քննությունը

Հոդված 6§1

Չնայած որ Դատարանը չէր կարող քննել խնամակալի սկզբնական նշանակման փաստը, քանի որ այս հարցի վերաբերյալ գանգատը ներկայացվել է վեց ամսյա ժամկետի բաց թողումով, Դատարանը չէր կարող անտեսել այն հանգամանքը, որ դիմումատուն չի մասնակցել իր անգործունակության վերաբերյալ դատաքննությանը: Ինչ վերաբերում է խնամակալին փոխելու վերաբերյալ գործընթացին, հաշվի առնելով դիմումատուի և իրեն որդեգրող հոր հետ խնդրահարույց հարաբերությունները և կոնֆլիկտային հարցերը, իրեն որդեգրած հոր փաստաբանը դիմումատուին պատշաճ ձևով չէր կարող ներկայացնել և նա պետք է անձնական փաստաբան ունենար: Դատավորը նաև մերժել է Դ.Գ.-ի կողմից քննության ձայնագրման պահանջը:

Պարզվել է, նաև որ դիմումատուին թույլ չեն տվել դատաքննության ժամանակ նստել Դ.Գ.-ի կողքին: Դիմումատուին, ենթադրաբար, դատաքննության ընդմիջման ժամանակ տարել են դատավորի մոտ և վերադառնալուց հետո դիմումատուն տվել է իր համաձայնությունը: Այդ դատաքննության ընդհանուր մթնոլորտը, այսպիսով, վատ ազդեցություն է թողել դիմումատուի մեկուսացման և ինքնազգացողության վրա, այն դեպքում, երբ կարող էր հակառակ ազդեցությունը ունենար, եթե նա անձնական ներկայացուցիչ ունենար: Հիմնվելով հետևյալի վրա՝ Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուի վերաբերյալ դատաքննությունը անարդար է եղել և Կառավարության դիմում ներկայացնելու իրավունքի չարաշահման վերաբերյալ առարկությունը մերժել է:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 5§1 (ե)

(i) Ընդունելիություն

Անձի ազատությունից զրկված լինելու հանգամանքը պարզելու համար անհարժեշտ է հաշվի առնել մի շարք փաստեր, որպիսիք են՝ խնդրո առարկա հանդիսացող միջոցների տեսակը, տևողությունը, ազդեցությունը և եղանակները: Ի հավելումն անձի՝ անորոշ ժամկետով, որոշակի սահմանափակ տարածքում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառման օբյեկտիվ տարրերի՝ անձը կարող է համարվել ազատությունից զրկված ևս մեկ սուբյեկտիվ տարրի բավարարման դեպքում, մասնավորապես, երբ անձը փաստորեն անձամբ չի համաձայնվել իրեն ազատությունից զրկելու հետ: Չնայած որ

վիճարկելի է դիմումատուի տվյալ հաստատությունում փաստացի իրավիճակը, պարզ էր, որ հաստատության ղեկավարությունը յոթ տարիների ընթացքում դեղամիջոցների և հսկողության միջոցով դիմումատուի համար ապահովել են ամբողջական և արդյունավետ բուժում, ուշադրություն, բնակություն և հաստատությունից դուրս գալու հնարավորություն: Այս հաստատություն կանոնների համաձայն, հիվանդներին թույլատրելի չի եղել առանց համաձայնության դուրս գալու հաստատությունից: Դիմումատուի գործի հետ կապված փաստերը առանձնանում են Հ.Մ. ընդդեմ Շվեյցարիայի գործից որտեղ դիմումատուն՝ մի մեծահասակ կին, համաձայնել էր մնալ մասնավոր հիվանդանոցում և այդ հիվանդանոցում մնալը արդարացի համարելու համար գոյություն ունեին բազմաթիվ երաշխիքներ: Հակառակ սրան, տվյալ գործում դիմումատուն չի ցանկացել մնալ այդ հաստատությունում և նրան հաստատություն են տեղավորել առանց դատարանների միջամտության իր խնամակալի պահանջով: Ավելին, հակառակ Կառավարության փաստարկների, դիմումատուի գործը չի կարող համեմատվել Նիելսեն ընդդեմ Դանիայի գործին, որը վերաբերում էր մոր պահանջով սահմանափակ ժամկետով երեխային վիրաբուժական նպատակներով հիվանդանոցում տեղավորելուն: Վերջիվերջո, ինչ վերաբերում է դիմումատուի սուբյեկտիվ ընկալմանը, բացի այն փաստից, որ նրա գործունակությունը սահմանափակել են, նա դեռ ի վիճակի է եղել իր դրության վերաբերյալ կարծիք արտահայտելու և միանշանակ առարկել է այդ հաստատությունում իր գտնվելու փաստը և տարբեր ժամանակներում

պահանջել է, որ իրեն դուրս գրեն այդ հաստատությունից: Ելնելով տվյալ փաստերից՝ Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուին 5 § 1 հոդվածի իմաստով զրկել են ազատությունից:

(ii) *Ըստ էության քննությունը*

Դատարանն ընդունել է, որ նեղ իմաստով դիմումատուի առանց իր կամքի հաստատությունում տեղավորելը «օրինական» է եղել: Դատարանը այս եզրակացությամբ ապահովել է ներպետական իրավունքի նյութական և ընթացակարգային պահանջները: Ինչևէ, 5 § 1 հոդվածի համատեքստում «օրինականության» պատկերացումը, որը պահանջում է երեք հետևյալ չափանիշները՝ պետք է հստակորեն մատնանշվի գործին առնչվող անձի անառոջը մտքի փաստը, գործով քննարկվող մտավոր ունակության խանգարումը պետք է լինի այնպիսին, որ արդարացնի անձին՝ առանց իր կամքի ազատությունից զրկելը և տևական ժամանակով ազատությունից զրկելու ժամկետը պետք է պայմանավորված լինի մտավոր ունակության խանգարման անփոփոխելի լինելու փաստի վրա: Դիմումատուն մտավոր ունակության խնդիրներով տառապել է սկսած 1979թ. և նրան ախտորոշել են տևական պարանոիդ շիզոֆրենիա հիվանդությունը՝ իրեն այդ հաստատությունում տեղավորելուց ընդամենը մի քանի շաբաթ առաջ: Սոցիալական աշխատողը վկայել է, որ դիմումատուն մենակ ապրելու պարագայում ի վիճակի չէր լինի ինքնուրույն հոգալու իր կարիքները: Հետևաբար հստակորեն սահմանվել է, որ դիմումատուն տառապում էր մտավոր խանգարմամբ, որը պահանջում էր բժշկական բնույթի հարկադրանքի միջոց: Ավելին՝ պարզվում է, որ դիմումատուի

նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելը անհրաժեշտ էր, քանի որ նրա պարագայում այլ համապատասխան միջոցներ չէր կարող ձեռնարկվել:

Եզրակացություն՝ խախտում չկա (միաձայն):

Հոդված 5 § 4

Ըստ Դատարանի պրակտիկայի՝ անառողջ միտք ունեցող անձանց նկատմամբ, ուլքեր բռնի կերպով տեղավորվել են հոգեբուժական հաստատությունում, տևական ժամանակով ազատությունից զրկելու օրինականությունը վիճարկելու նպատակով սկզբունքորեն պետք է դատական քննություն անցկացվի՝ զուգորդված բավարար ընթացակարգային երաշխիքներով, ողջամիտ ընդմիջումներով: Դիմումատուի գործում սա ամենակարևոր պահանջն էր, այն պարագայում, երբ իրեն իր խնամակալի պահանջով և տեղական ու սոցիալական ապահովության մարմինների կայացրած որոշմամբ են տեղավորել այդ հաստատությունում առանց գործում դատարաններին ներառելու: Ինչևէ, ներպետական իրավունքը չի ապահովում ավտոմատ դատական քննություն անձին, այնպիսի հաստատությունում, որտեղ դիմումատուն էր պահվել, տեղավորելու կամ պահելու օրինականությունը, դատական այնպիսի իրավիճակներում, ինչպիսին դիմումատուինն էր: Ավելին նման քննությունը չի կարող նախաձեռնել այն անձը, որի գործունակությունը սահմանափակվել է: Դիմումատուն, հետևաբար, ի վիճակի չի եղել անձամբ ձեռնամուխ լինելու որևէ դատական բնույթի ներպետական իրավական պաշտպանության միջոցի՝ իրեն տևական ժամանակով առանց իր կամքի

հաստատությունում պահելու փաստը վիճարկելու համար:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41

8,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

(տե՛ս, նաև *Stanev v. Bulgaria* [GC], թիվ 36760/06, 17 հունվար 2012, Տեղեկատվական նոթ՝ թիվ 148; *H.M. v. Switzerland*, թիվ 39187/98, 26 փետրվար 2002, Տեղեկատվական նոթ՝ թիվ 39; *Nielsen v. Denmark*, թիվ 10929/84, 28 նոյեմբեր 1988; և *Winterwerp v. the Netherlands*, թիվ 6301/73, 24 հոկտեմբեր 1979):

Հոդված 5 § 4

Կալանավորման օրինականության վերանայումը _____

Մտավոր հետամնաց դիմումատուի անկարողությունը՝ բողոքարկելու իր նկատմամբ իր կամքին հակառակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելը, առանձին իրավական ներկայացուցչության միջոցով՝ խախտում

D.D. v. Lithuania
Դ.Դ. ընդդեմ Լիտվայի
13469/06, Վճիռ/14.2.2012
[2-րդ բաժանմունք]

(տե՛ս, վերը նշված հոդված 5 § 1 (ե), էջ 13)

ՀՈԴՎԱԾ 6

Հոդված 6 § 1 (քաղաքացիական)

Արդար դատաքննություն _____

Հետադարձ ուժով օրենսդրական միջամտություն մասնավոր անձանց միջև տեղի ունեցող դատավարության մեջ՝ խախտում

Arras and Others v. Italy
Արասը և այլոք ընդդեմ Իտալիայի
17972/03, Վճիռ/ 14.2.1012
[2-րդ Բաժանմունք]

Փաստեր

Հանդիսանալով թոշակառուներ և բանկային խմբի նախկին աշխատողներ, դիմումատուները օգտվել են բացառիկ սոցիալական ապահովության ծրագրից առավել բարենպաստ փոխհատուցման մեխանիզմով: 1990թ. խմբի մասնավորեցման հետևանքով նրանց թոշակային համակարգի մի շարք դրույթներ փոփոխման են ենթարկվել: Դիմումատուի նման կարգավիճակ ունեցող մի շարք թոշակառուներ վարույթ են սկսել բողոքարկելով խմբի մերժումը նրանց հանդեպ առավել բարենպաստ փոխհատուցման մեխանիզմի կիրառման շարունակության մասին, ինչը հանգեցրել էր նրանց կողմից ավելի ցածր թոշակ ստանալուն: 1994թ. ներպետական դատարանները վճռեցին ի օգուտ թոշակառուների: Դիմումատուները վարույթ սկսեցին 1996թ. համարելով, որ նախկինում կայացրած նախադեպը կկիրառվի նաև իրենց գործերին: Այնուամենայնիվ, առաջին և երկրորդ

ատյանների բարենպաստ որոշումներից հետո ուժի մեջ մտավ թիվ 243/04 օրենքը: Այն, հետադարձ ուժ ունենալով 1992թ., սահմանեց, որ խմբի թոշակի անցած աշխատողները այլևս չեն կարող օգտվել առավել բարենպաստ փոխհատուցման մեխանիզմներից: Հետագայում վճռաբեկ դատարանը չեղյալ հայտարարեց ստորին ատյանների որոշումները և մերժեց դիմումատուների գանգատները:

ՕՐԵՆՔ

Հոդված 6§1
Համաձայն դատարանի միատեսակ պրակտիկայի՝ օրենսդիրը կաշկանդված չէր հետադարձ ուժ ունեցող դրույթների միջոցով գործող օրենքից բխող իրավունքների կարգավորումից: Այնուամենայնիվ, օրենքի գերակայության սկզբունքը և արդար դատաքննության իրավունքը կանխարգելում են օրենսդիրի կողմից միջամտությանը արդարադատության իրականացմանը, որը նախատեսված է վեճի դատական լուծման համար: Անկախ այն հանգամանքից, որ Պետությունը չէր հանդիսանում խնդրո առարկա հանդիսացող վարույթի կողմ, Դատարանը սահմանեց, որ Պետության պատասխանատվությունը առկա էր ինչպես իր օրենսդրական, այնպես էլ դատական իրավասությունների իրականացման տեսանկյունից: Թիվ 243/04 օրենքը հետադարձ ուժով սահմանեց ներպետական դատարաններում քննվող վեճի էությունը՝ դրանով անիմաստ դարձնելով դիմումատուի դերում հանդես եկող մի խումբ անձանց համար դատական վեճի շարունակումը: Հետևաբար, երկու մասնավոր կողմերի միջև առկա չէր իրավահավասարության սկզբունքը, քանզի Պետությունը ի շահ

դրանցից մեկի գործեց, օրինական ուժ տալով վիճարկված օրենսդրությանը: Ավելին, Կառավարության կողմից չներկայացվեց ընդհանուրի շահերից բխող մի որևէ հիմնավոր պատճառ, որը կարողարացներ այդ տեսակ օրենսդրական միջամտությունը:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41

5,500 եվրոյի և 30,000 եվրոյի նյութական և ոչ նյութական վնասների հատուցում:

(տե՛ս, նաև *Zielinski and Pradal & Gonzalez and Others v. France* [GC], թիվ 24846/94 et al., 28 հոկտեմբեր 1999; և *Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece*, թիվ 13427/87, 9 դեկտեմբեր 1994):

Մտավոր հետամնաց դիմումատուի խնամակալության հարցով անարադար դատաքննություն՝ խախտում

D.D. v. Lithuania
Դ.Դ. ընդդեմ Լիտվայի
13469/06, Վճիռ/14.2.2012
[2-րդ բաժանմունք]

(տե՛ս, վերը նշված հոդված 5 § 1 (ե), էջ 13)

ՀՈԴՎԱԾ 6 § 2

Անմեղության կանխավարկած _____

Ժամանակավոր կալանքի տակ գտնվող պաշտոնյայի աշխատանքից ազատումը՝ անընդունելի

Tripon v. Romania
Տրիպոնն ընդդեմ Ռումինիայի
27062/04, Որոշում 7.2.2012
[3-րդ Բաժանմունք]

Փաստեր

2001թ.-ի սեպտեմբերին, դիմումատու պետական պաշտոնյան, ով սահմանային անցակետում աշխատում էր որպես մաքսային ստուգող, պետության շահերին դեմ գործողություններ կատարելու համար ծառայողական չարաշահմամբ, վեց այլ գործընկերների հետ դատախազության որոշմամբ ժամանակավոր կալանքի տակ է առնվում: 2001թ. նոյեմբերին, առաջին ատյանի դատարանի որոշմամբ ժամանակավոր կալանքի ժամանակահատվածը երկարաձգվում է մինչ 2001թ. դեկտեմբերի 1-ը և հենց այդ օրը վերջինս ազատ է արձակվում: 2001թ. նոյեմբերի 28-ին ֆինանսների նախարարի որոշմամբ դիմումատուն ազատվում է աշխատանքից՝ հիմք ընդունելով աշխատանքային օրենսգրքի այն դրույթը, ըստ որի գործատուն իրավունք ունի ազատել աշխատանքից այն աշխատակցին, ով վաթսուն օրից ավել կալանքի տակ է գտնվել՝ անկախ դրա պատճառներից:

Դիմումատուն անօգուտ փորձում է դատարանում վիճարկել իր աշխատանքից հեռացման որոշումը: 2003թ. ներկայանում է Սահմանադրական դատարան՝ օրենսդրության վերոհիշյալ դրույթի սահմանադրականությունը վիճարկելու համար, որը մերժվում է: 2004թ. դիմումատուն դատապարտվում է

պայմանական ազատազրկման: Վերջինս բողոքարկում է դատարանի այդ որոշումը: 2010թ. նրա վերաբերյալ քրեական վարույթը կասեցվում է՝ քրեական պատասխանատրվության ժամկետի ավարտման հիմքով: Դատարանը համարում է, որ դիմումատուի արդարացման համար ոչ մի լուծում չի նախատեսվում՝ հաշվի առնելով նրա գործում առկա բոլոր այն փաստերը, որ ապացուցում են նրա մեղավորությունը:

ՕՐԵՆՔ

Հոդված 6§2

Աշխատանքային օրենսգրքից բխող աշխատանքից ազատելու գործատուի իրավունքը վերոհիշյալ ժամանակահատվածում, ինչի պատճառը վաթսույն օրից ավել տևած ժամանակավոր կալանքն էր, հիմնվում էր օբյեկտիվ գործոնի վրա՝ այն է աշխատանքի վայրից երկարաժամկետ բացակայությունը, և ոչ թե նրա մեղավորության գործոնը: Անհերքելի է, որ աշխատանքային օրենսգրքի այս դրույթով ազգային օրենսդիրը նպատակ է ունեցել պաշտպանել թե պետական, և թե մասնավոր գործատուներին աշխատանքից երկար ժամանակով բացակայության պատճառով առաջացող անբարենպաստ հետևանքներից՝ ինչպես դա նկատել էր նաև Սահմանադրական դատարանը:

Դատարանը չի միջամտում երկրների օրենսդրական քաղաքականության ընտրությանը: Դա հատկապես այն պարագայում, երբ ազգային օրենսդրությունը նախատեսում է բավարար երաշխիքներ՝ ազատազրկման պարագայում աշխատանքից երկարաժամկետ բացակայելու դեպքում աշխատողի հանդեպ կամայական կամ չարաշահող վերաբերմունքից խուսափելու համար:

Սակայն, ռումինական օրենսդրությունը, տվյալ ժամանակահատվածում կարիք չունեի այդպիսի երաշխիքների. դատախազությունը ուներ կալանք նշանակելու առավելագույնը երեսունօրյա ժամկետի իրավասություն, այն երկարաձգելու կարգադրության իրավունքը պատկանում էր բացառապես դատարանին և միայն անհրաժեշտության և պատճառաբանված դեպքերում: Ավելին, պետական մարմնի ոչ մի ներկայացուցիչ, լինի դա դատավոր, դատարան, թե որևէ այլ պետական պաշտոնյա, սույն գործում չի արել այնպիսի հայտարարություն, որը կակնարկեր դիմումատուի հանցավոր լինելու մասին մինչ 2004թ. առաջին ատյանում նրա դատավճռի կայացումը:

Մասնավորապես, աշխատանքից ազատման ազգային որոշումները, չեն արտացոլում որևէ հայտարարություն այն մասին, որ տվյալ անձը մեղադրվում է այս կամ այն հանցավորության մեջ, որի համար իր դեմ մեղադրանք է առաջադրվել:

Ավելին, հակասական և հասարակական գործընթացի պայմաններում իրականացված մանրակրկիտ քննության արդյունքում է, որ դատարանը հաստատել է դիմումատուի մեղադրանքի հիմքում ընկած հասարակական շահի դեմ իրականացված չարաշահումները:

Այնուամենայնիվ դատարանները նրա հանդեպ օրենսդրության ամենաբարենպաստ դրույթներն են կիրառել՝ կարգադրելով դադարեցնել նրա հանդեպ իրականացվող քրեական վարույթը՝ այն պատճառով, որ օրենքով սահմանված քրեական պատասխանատվության ժամկետը արդեն լրացել էր: Իրականում, եթե քրեական վարույթի արդյունքում դիմումատուն արդարացվեր, օրենքը միևնույն է չէր պարտադրի նախկին

գործատուին վերականգնել նրան իր պաշտոնում:

Այնուամենայնիվ, այդ ժամանակ դիմումատուն հնարավորություն կունենար դատական սխալի պատճառով իր կրած վնասը վերականգնելու համար հայց ներկայացնել պետության դեմ:

Վերջապես, ռումինական ներկայիս գործող օրենսդրությունը, 2005թ.-ից ի վեր, ժամանակավոր կալանքի պատճառով բացակայության առավելագույն ժամկետը սահմանել է երեսուն օր, որից հետո, գործատուն իրավունք ունի աշխատողին ազատել աշխատանքից: Հիմա, միայն անկախ և անկողմնակալ դատարանը իրավունք ունի, ելնելով Կոնվենցիայի 6 § 1 հոդվածի դրույթներից, հիմնավորված որոշմամբ նշանակել ժամանակավոր կալանք հանցանքի կատարման մեջ կասկածվող անձանց նկատմամբ:

Հաշվի առնելով բոլոր այս հանգամանքները, գործատուի կողմից դիմումատուի աշխատանքից ազատումը, բխում է փաստերի իրագործման ժամանակահատվածում գործող օրենսդրությունից, և չի կարող դիտվել որպես հայտարարություն կամ գործողություն, որը արտացոլում է դիմումատուի մեղավորությունը կամ կանխորոշում է իրավասու դատավորի կողմից փաստերի գնահատումը:

Եզրահանգում՝ անընդունելի (ակնհայտ անհիմն):

ՀՈՂՎԱԾ 8

Պոզիտիվ պարտավորություններ Անձնական կյանքը հարգելու իրավունք

Ներպետական դատարանների կողմից հայտնի զույգին առանց իրենց տեղեկացնելու նկարահանված լուսանկարի հետագա տպագրության արգելման հրաման արձակելու մերժում՝ խախտում չկա

Von Hannover v. Germany (no. 2)
Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի
(թիվ 2) - 40660/08 և 0641/08
Վճիռ 7.2.2012 (ՄՊ)

Փաստերը

Դիմումատուները Մոնակոյի վերջին արքայազն Ռեյնիեր III-ի դուստր, արքայադուստր Քերոլայն Ֆոն Հաննովերը և նրա ամուսին արքայազն Էրնսթ Օգոստոս Ֆոն Հաննովերն են: 1990թ. սկսած արքայադուստր Քերոլայնը ձգտում էր, հաճախ դատարանների միջոցով, խոչնդոտել իր անձնական կյանքի լուսանկարների տպագրությունը մամուլում: Լուսանկարների երկու շարք, որոնք տպագրվել էին գերմանական ամսագրերում 1993 և 1997թթ. գերմանական դատարաններում քննության առարկա հանդիսացան, ինչը հանգեցրեց իր հայցը մերժող նախադեպային վճիռների կայացմանը՝ 1995թ. Արդարադատության դաշնային դատարանի կողմից և 1999թ. Դաշնային սահմանադրական դատարանի կողմից: Այդ վարույթները առարկա էին հանդիսացել Եվրոպական դատարանի *Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի*¹ վճռի համար (առաջին *Ֆոն Հաննովեր* վճիռը), որտեղ Դատարանը 8-րդ հոդվածի ներքո ճանաչել է

¹ *Վոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի*, զանգատ թիվ. 59320/00, 24 հունիսի 2004թ., Տեղեկատվական նոթ՝ թիվ 65

արքայադուստր Քերոլայնի անձնական կյանքի իրավունքի խախտում:

Այդ վճռից հետո դիմումատուները շարունակեցին հետագա վարույթը ներպետական դատարաններում՝ հետագա տպագրությունը արգելող հրաման արձակելու համար՝ կապված դահուկային արձակուրդների ժամանակ նկարահանված երեք լուսանկարների, որոնք արվել էին առանց նրանց համաձայնության 2002 և 2004թթ. ընթացքում և հայտնվել էին գերմանական երկու ամսագրերում:

Արդարադատության դաշնային դատարանը լուսանկարներից երկուսի առնչությամբ, որոնք, ըստ նրա, չէին հանդիսանում համընդհանուր շահի առարկա, հրաման արձակեց: Այնուամենայնիվ, դատարանը երրորդ լուսանկարի առնչությամբ, որտեղ պատկերված էին դիմումատուները Սուրբ Մորիցում դահուկային արձակուրդի ժամանակ զբոսնելիս և որին կից ներկայացված էր, ի թիվս ալ հարցերի, նաև արքայազն Ռեյների վատ առողջական վիճակի մասին վկայող հոդված, չարձակեց հրաման: Այդ որոշումը Դաշնային սահմանադրական դատարանի կողմից թողնվեց ուժի մեջ, որը սահմանեց, որ Արդարադատության դաշնային դատարանը իրական հիմքեր ուներ համարելու, որ գործող արքայազնի վատ առողջական վիճակը հանդիսանում է համընդհանուր շահի առարկա և մամուլը կոչված էր տեղեկացնել այդ փաստի առթիվ այն կերպ, ինչպես նրա երեխաները համաձայնեցրեցին իրենց ընտանեկան համերաշխության ապահովման պարտավորությունները իրենց անձնական կյանքի օրինական պահանջների հետ, որոնց մեջ մտնում էր արձակուրդ գնալու ցանկությունը: Արդարադատության դաշնային դատարանի եզրակացությունը առ այն, որ լուսանկարիչը

բավականին սերտ կապված էր հոդվածում նկարագրված դեպքի հետ սահմանադրականորեն անառարկելի էր:

ՕՐԵՆՔ

Հոդված 8

Ի պատասխան դիմումատուների պնդմանը, որ ներպետական դատարան-ները բավարար չափով հաշվի չեն առել առաջին Ֆոն Հաննովերի վճռում Դատարանի որոշումը, Դատարանը նշում է, որ իր խնդիրը չէր պարզել, թե արդյոք Գերմանիան կատարել է իր պարտավորությունները Կոնվենցիայի 46-րդ հոդվածի շրջանակներում՝ կապված այդ վճռի կատարման հետ. դա հանդիսանում էր Նախարարների Կոմիտեի պարտականությունը: Սույն դիմումը, այսպիսով, առնչվում էր միայն նոր վարույթի հետ: Նմանապես, Դատարանի խնդիրը չի հանդիսանում ուսումնասիրել համապատասխան ներպետական օրենսդրությունը և ընդհանուր իրավակիրառ պրակտիկայում կատարված փոփոխությունները, որոնք հետևեցին Արդարադատության դաշնային դատարանի կողմից իր առաջին Վոն Հաննովերի վճռի արդյունքում իր նախկին նախադեպային իրավունքի մեջ կատարված փոփոխություններին. փոխարենը, իր խնդիրն էր սահմանել, թե արդյոք դիմումատուների հանդեպ օրենքի և իրավակիրառ պրակտիկայի կիրառման կարգը խախտել է 8-րդ հոդվածը:

Կիրառելով իր նոր մոտեցումը Արդարադատության դաշնային դատարանը հրաման արձակեց երկու լուսանկարների առնչությամբ հիմք ընդունելով այն, որ ոչ դրանք, ոչ էլ դրանց կից ներկայացված հոդվածները չէին նպաստում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցի

քննարկմանը: Իսկ ինչ վերաբերում է երրորդ լուսանկարի, այնուամենայնիվ դատարանը համարեց, որ արքայազն Ռեյնիերի հիվանդությունը և իր ընտանիքի անդամների գործողությունները այդ ժամանակ որակավորվեցին որպես ժամանակակից հասարակական իրադարձություն, որի մասին ամսագրերը իրավասու էին տեղեկացնել և ներկայացնել նաև լուսանկարներ՝ որպես հաղորդվող տեղեկատվության ցուցադրում և հավաստիացում: Դատարանը համարեց, որ արքայազն Ռեյնիերի հիվանդության որակավորումը ներպետական դատարանի կողմից որպես ժամանակակից հասարակական իրադարձություն չի կարող համարվել անհիմն և այն կարող էր ընդունել, որ հոդվածի լուսի ներքո դիտարկված լուսանկարը նվազագույնը որոշ չափով համարում էր համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող առարկա (այդ առնչությամբ դատարանը նշեց, որ նմանատիպ պայմաններում դիմումատուներից ցուցադրող մյուս երկու լուսանկարների հրատարակումը արգելող հրամանները արձակվել էին մեծամասամբ որովհետև դրանք հրատարակվել էին միայն զվարճանքի նպատակներով): Ավելին, անկախ այն հանգամանքից, թե որքանով էր արքայադուստր Քերոլայնը իրականացնում պետական գործառույթներ Մոնակոյի Թագավորության անունից, հնարավոր չէր պնդել, որ դիմումատուները, ովքեր անկասկած շատ լավ ճանաչված էին, հանդիսանում էին հասարակ մասնավոր անձինք: Նրանց անհրաժեշտ էր վերաբերվել որպես հանրությանը հայտնի մարդկանց: Իսկ լուսանկարների նկարահանման պայմանների առնչությամբ, սա հաշվի առնվեց ներպետական դատարանների կողմից, որոնք գտան, որ

դիմումատուները չեն ներկայացրել որևէ ապացույց ցույց տալու համար, որ լուսանկարները թաքուն են նկարահանվել, գաղտնի կամ այլ անբարենպաստ պայմաններում:

Որպես վերջաբան, ներպետական դատարանները մանրակրկիտ համադրել են տպագրական ընկերությունների ազատ արտահայտվելու իրավունքը դիմումատուների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ: Դա անելով նրանք էական նշանակություն տվեցին այն հարցին, թե արդյոք հոդվածներին կից ներկայացվող լուսանկարները հանդիսանում են համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող առարկա, ինչպես նաև ուսումնասիրեցին այն հանգամանքները, որոնց շնորհիվ կատարվել էին դրանք: Արդարադատության դաշնային դատարանը փոխեց իր մոտեցումը հետևելով առաջին *Ֆոն Հաննովերի* վճռին, իսկ Դաշնային սահմանադրական դատարանը իր մասով ոչ միայն հաստատեց այդ մոտեցումը, այլ նաև կատարեց Դատարանի նախադեպային իրավունքի մանրամասն ուսումնասիրություն՝ ի պատասխան դիմումատուների գանգատների, որ Արդարադատության դաշնային դատարանը ուշադրություն չի դարձրել դրան: Այսպիսի հանգամանքներում, դատարանների կողմից, հայեցողության սահմանի կիրառմամբ միմյանց հակասող շահերի միջև հավասարակշռությունը պահպանելու տեսանկյունից, ներպետական դատարանները չեն խախտել 8-րդ հոդվածի ներքո իրենց վրա դրված պոզիտիվ պարտավորությունները:

Եզրակացություն՝ խախտում տեղի չի ունեցել (միաձայն):

(տե՛ս, նաև *Axel Springer AG v. Germany*, ստորև նշված հոդված 10-ի ներքո, էջ 21)

Պոզիտիվ պարտավորություններ

Հաշմանդամ անչափահասի նկատմամբ ծնողական իրավունքի մասին դատաքննության ձախողում՝ խախտում

A.M.M. v. Romania
Ա.Մ.Մ ընդդեմ Ռումինիայի
2151/10, Վճիռ 14.2.2012
[3-րդ բաժանմունք]

Փաստեր

Դիմումատուն 2001թ.-ին արտամուսնական հարաբերությունից ծնված հաշմանդամություն ունեցող երեխա է: Սկզբում նա դատարան է ներկայացել մոր հետ, այնուհետև՝ վերջինիս կողմից լուրջ հաշմանդամություն ձեռք բերելու հետևանքով, մորական գծով տատի հետ: Իր ծննդյան վկայականում դիմումատուն գրանցված է որպես միայնակ մոր երեխա: 2001թ.-ին նրա մայրը հայց է ներկայացնում դատարան ընդդեմ Զ.-ի, հայտարարելով, որ երեխայի ծնունդը նրա հետ ունեցած հարաբերության արդյունք է: Նա որպես հիմք ներկայացնում էր Զ.-ի կողմից ստորագրված մի ձեռագիր հայտարարություն, որում վերջինս խոստովանում էր, որ հանդիսանում է երեխայի հայրը և խոստանում էր վճարել ալիմենտ: Սակայն, Զ.-ն չի ներկայանում Դատաբժշկական ինստիտուտ և դատական նիստին: 2003թ.-ին դատարանը նշեց, որ դիմումատուի մայրը որոշեց ընթացք տալ դատաբժշկական փորձաքննությանը և վկաների

հարցաքննությանը, և մերժեց վերջինս պահանջները որպես անհիմն: Վերաքննիչ բողոք է ներկայացվում այդ որոշման դեմ, որն անընդունելի է ճանաչվում՝ հիմքերի բացակայության պատճառով:

Չնայած ներկայանալու մասին ծանուցմանը, մունիցիպալ խնամակալության ծառայության ներկայացուցիչը չի ներկայանում դատական նիստին:

ՕՐԵՆՔ

Հոդված 8

Դատարանը պետք է որոշի, թե արդյոք պատասխանող երկիրը ուսումնասիրելով դիմումատուի հորը փնտրելու հայցը, գործել է իր պոզիտիվ պարտավորության խախտմամբ, ինչը կառաջացնի վերոհիշյալ հոդվածի խախտում: Համաձայն ազգային օրենսդրության, խնամակալության և հոգաբարձության մարմինը նախատեսված է որպեսզի վերահսկի անչափահասների և սահմանափակ կարողությունների տեր մարդկանց շահերի պաշտպանությունը, այդ թվում դատական վարույթների ժամանակ: Այնուամենայնիվ, խնամակալության և հոգաբարձության մարմինը չի մասնակցում վարույթին՝ չնայած ներկա գտնվելու նրա պարտավորությանը՝ այն դեպքում, երբ ոչ դիմումատուն, ոչ նրա մայրը ամբողջ վարույթի ընթացքում չեն ներկայացվում փաստաբանի կողմից: Չնայած այդ շարունակական անտարբերությանը, դատարանը չի գործադրում որևէ միջոց՝ այդ մարմնին դատարան ներկայանալու պարտավորեցման ուղղությամբ:

Ավելին, նրա բացակայությունը վարույթում չի փոխարինվում երեխայի շահերի պաշտպանության համար ներկայացուցչություն ապահովելու մեկ այլ միջոցով, ինչպիսին է օրինակ՝ փաստաբան

նշանակելը կամ հանրային ծառայությունից որևէ ներկայացուցչի կողմից քննարկմանը մասնակցությունը, չնայած այն բանին, որ նույն դատարանը հաստատել էր դրա անհրաժեշտությունը: Առաջին անհաջող փորձից հետո իշխանությունների կողմից ևս չի ձեռնարկվել որևէ միջոցառում, կապ հաստատելու համար մոր կողմից առաջարկվող վկաներին հարցաքննելու համար: Հաշվի առնելով երեխաների գերակա շահերը և այս իրավիճակի համար օրենսդրությամբ սահմանված դրույթը, որը պարտադրում է խնամակալության և հոգաբարձության կամ հանրային իշխանության մարմնի ներկայացուցչի ներկայությունը հորը փնտրելու վարույթի ժամանակ, իշխանությունները պետք է գործեին ի շահ դիմումատու երեխայի գերակա իրավունքի, որպեսզի վերջինս ոչ մի պարագայում դուրս չմնար պաշտպանությունից: Բացի այս, դիմումատու երեխայի մայրը ծանր հաշմանդամություն ունենալու պատճառով ընդունվել է սոցիալական աջակցության ծառայության կողմից: Հնարավոր չէր որոշել, թե արդյոք գործողությունների ժամանակ վերջինս լիարժեքորեն ի վիճակի է եղել պաշտպանել իր երեխայի շահերը, թե ոչ, Դատարանը հիշեցնում է, որ ներպետական դատական բոլոր ատյաններին դիմելու փաստը հաշվի առնելիս, հարկավոր է նկատել որ, գոյություն ունի որոշակի խոցելի խավ, որը մասնավորապես դժվարանում է, ինչպես կարգն է պահանջում բողոք ներկայացնել դատարան, կամ նույնիսկ ընդհանրապես բողոք ներկայացնել: Ներպետական օրենքը չի նախատեսում ոչ մի միջոցառում, որը թույլ կտա պարտավորեցնել պատասխանող կողմին ենթարկվելով դատարանի կարգադրությանը համաձայնվել հայրության թեստ

հանձնելուն, այն ինչը կօգներ պաշտպանել երրորդ անձանց՝ բացառելով վերջիններիս մերժելու հնարավորությունը ենթարկվելով բժշկական հետազոտության՝ մասնավորապես ԴՆԹ հետազոտությունը: Համաձայն հաստատված պրակտիկայի, դատարանները կարող են իրենց որոշումներն ընդունել՝ հիմք ընդունելով, որ կողմերից մեկը խոչընդոտել է փաստերի հստակեցմանը: Սույն դեպքում, դատարանները ոչ մի պարագայում հաշվի չեն առել Զ.-ի մերժումը: Ներպետական օրենսդրությունը չի հարգել այն իրավունքների հավասարակշռությունը, որ առկա էր իր հորը փնտրող անչափահաս դիմումատուի շահերի պաշտպանության և որպես հայր կասկածվող անձի միջև, ով հրաժարվում էր հայրության թեստ հանձնել:

Եզրահանգում՝ խախտում (միաձայն):

Հոդված 41

7,000 եվրո՝ ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Անձնական կյանքը հարգելու իրավունք

Դիմումատուի անձնական տվյալների հափշտակում՝ իշխանությունների կողմից գողացված վարորդական իրավունքի վկայականն անվավեր չճանաչելու արդյունքում՝ խախտում

Romet v. the Netherlands
Ռոմեյնս ընդդեմ Նիդեռլանդների
7094/06, Վճիռ 14.2.2012
[3-րդ բաժանմունք]

Փաստեր

1995թ. նոյեմբերին դիմումատուն զեկուցել է ոստիկանությանը, որ իր վարորդական իրավունքների վկայականը գողացել են: 1997թ. մարտ ամսին նա դիմել է նոր վարորդական իրավունքների վկայական ստանալու համար, որը տրվել է նրան: Այնուամենայնիվ, մինևույն ժամանակ ավտոմեքենաների գրանցամատյանում իր անվան տակ 1,737 ավտոմեքենաներ են գրանցված եղել: Արդյունքում, դիմումատուն ստանում է բազմաթիվ ավտոմեքենաներից հարկերի գանձման պահանջ, մեղադրվում և տուգանվում է այդ ավտոմեքենաներով կատարված իրավախախտումների համար: Նա նաև կալանավորվում է տուգանքները չվճարելու պատճառով, և իր սոցիալական ապահովման նպաստի վճարումը դադարեցվում է, քանի որ իր անունով մի շարք ավտոմեքենաների գրանցված լինելու հետևանքով իր ֆինանսական միջոցները համարվել էին բավարար: Դիմումատուի պահանջի հիման վրա 2004թ. իշխանությունները չեղյալ են հայտարարել իր անունի տակ եղած գրանցումները, սակայն առանց հետադարձ ուժի՝ գտնելով, որ դա իրավունքի որոշակիության սկզբունքից ելնելով անհնար է անել: Դիմումատուի ներպետական դատարաններ ներկայացրած հետագա բողոքները մերժվել են:

ՕՐԵՆՔ

Հոդված 8

Դիմումատուի վարորդական իրավունքների վկայականի անվավեր չճանաչելը, ինչը հնարավորություն է ընձեռել ուրիշներին օգտագործել իր անձնական տվյալները, հանդիսանում է անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտություն: Հիմնվելով եւս Դիրեկտիվ 95/46/ԵԴ-ին, դիմումատուն բողոքել է, որ իր անձնական կյանքին միջամտությունը անօրինական է եղել: Այնուամենայնիվ, Արդարադատության Վարչական Բաժինը մերժել է այդ առնչությամբ դիմումատուի փաստարկը և, Կոնվենցիայի նպատակներից ելնելով, պարտավորեցրել ներպետական իշխանություններին միայն այն չափով, որքանով, որ այդ Դիրեկտիվը կներառվեր ներպետական օրենսդրության մեջ: Դիմումատուն զեկուցել էր իր վարորդական իրավունքների վկայականի գողության մասին 1995թ. և այդ իսկ պահից ի վեր իշխանությունները պետք է տեղյակ լինեին, որ վկայականն այլևս իր տիրապետման ներքո չի գտնվել, և նրանք կարող էին իրականացնել արագ վարչական գործողություններ՝ այն որպես ինքնությունը հաստատող փաստաթղթի օգտագործումը կասեցնելու համար: Այնուամենայնիվ, վկայականն անվավեր ճանաչվել է միայն 1997թ. մարտին, երբ դիմումատուն ձեռք է բերել նորը: Կառավարությունը բացատրություն չի ներկայացրել, թե ինչու այսպիսի գործողությունները չէին կարող իրականացվել անմիջապես դիմումատուի կողմից դրա գողության մասին փաստը զեկուցելուց հետո:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

Հոդված 41

9,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Նյութական վնասի մասին փոխհատուցման պահանջը մերժվել է:

Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Երեխայի բարձրագույն շահերի անբավարար ուսումնասիրության և Հաագայի Կոնվենցիայի շրջանակներում անարդար վարույթը՝ խախտում

Karrer v. Romania
 Կարերն ընդդեմ Ռումինիայի
 16965/10, Վճիռ 21.2.2012
 [3-րդ Բաժանմունք]

Փաստեր

2004թ.-ին առաջին դիմումատուն՝ Ավստրիայի քաղաքացի, ամուսնացել է Ռումինիայի քաղաքացի՝ Կ.Տ.-ի հետ: 2006թ.-ին զույգը ունենում է դուստր՝ երկրորդ դիմումատուն, ով գտնվել է նրանց համատեղ խնամքի տակ: 2008թ. հունվարին Կ.Տ.-ն դիմում է դատարան՝ դաժան վերաբերմունքի պատճառով առաջին դիմումատուին ընտանիքից հեռացնելու մասին հրաման ստանալու պահանջով: Հրամանը տրվում է երեք ամիս ժամկետով և քրեական հետապնդում է հարուցվում: Զույգը բաժանվում է և Կ.Տ.-ն դիմում է դատարան՝ ամուսնալուծության պահանջով: Նա նաև երկրորդ դիմումատուի նկատմամբ ժամանակավոր միակողմանի խնամքի պահանջ է ներկայացնում: 2008թ. հուլիսին ավստրիական դատարանն ազատում է առաջին դիմումատուին մարմնական վնաս հասցնելու մեղադրանքից: 2008թ.

սեպտեմբերին, այն ժամանակ, երբ ամուսնալուծության և խնամակալության հայցերը դեռևս սպասում էին ավստրիական դատարանների քննությանը, Կ.Տ.-ն երկրորդ դիմումատուի հետ միասին մեկնել է Ռումինիա: Առաջին դիմումատուն «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» Հաագայի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո ներկայացրել է երեխային Ավստրիա վերադարձնելու պահանջ: Ռումինական իշխանությունները հայտարարել են, որ երկրորդ դիմումատուն ապրում էր Կ.Տ.-ի հետ իր տատիկի և պապիկի տանը և սոցիալական ծառայությունները հաշվետվություն են կազմել հիմնականում նկարագրելով նրա կենսապայմանները: Առաջին ատյանի դատարանը որոշում կայացրեց ի օգուտ երկրորդ դիմումատուի Ավստրիա վերադառնալու մասին, սակայն վերաքննիչ դատարանն այդ որոշումը չեղյալ համարեց գտնելով, որ վերադարձը կարող է երկրորդ դիմումատուին ֆիզիկական և հոգեբանական վնասի ենթարկվելու վտանգ առաջացնել: Մինչդեռ, 2008թ. նոյեմբերին ավստրիական դատարանները բավարարել են առաջին դիմումատուի երեխայի միակողմանի խնամակալության պահանջը, որը կախված էր ամուսնալուծության դատավարության արդյունքից:

ՕՐԵՆՔ

Ց-րդ հոդված

Դատարանը նախ ուսումնասիրեց եղանակը, որով ռումինական իշխանությունները սահմանել են երեխայի բարձրագույն շահերը: Այդ կապակցությամբ ուշադրություն դարձվեց այն փաստին, որ իրենց գնահատականը հիմնված է եղել ժամկետը լրացած հրամանի վրա, որը արձակվել է

Ավստրիայում, և որոշել են ավստրիական դատարանների որոշումը, որով առաջին դիմումատուի վրա է դրվել ժամանակավոր խնամակալություն, չեղյալ ճանաչել միայն այն պատճառով, որ այդ որոշումը կայացվել է Կ.Տ»-ի Ռումինիա մեկնումից հետո: Բացի այդ, համապատասխան սոցիալական ծառայությունների հաշվետվությունը, որի վրա հիմնվել էին իրենց որոշումը կայացնելիս ռումինիական դատարանները, չէր գնահատել երկրորդ դիմումատուի Ավստրիա վերադառնալու հետևանքները: Ավելին՝ վկաների ցուցմունքները, որոնց վրա հիմնվել են, բաղկացած են եղել միայն Կ.Տ.-ի և նրա ծնողների հայտարարություններից, և չէր արվել ոչ մի փորձ կապ հաստատել առաջին դիմումատուի հետ իր կարծիքը իմանալու նպատակով: Նման պայմաններում, ներպետական իշխանությունների կողմից կատարած ուսումնասիրությունը, ուղղված երեխայի բարձրագույն շահերը սահմանելուն, չէր եղել բավարար չափով բազմակողմանի: Ինչ վերաբերում է որոշումների կայացման գործընթացին, ապա առաջին դիմումատուին երբեք չի տրվել հնարավորություն ռումինական դատարաններում ներկայացնել իր փաստարկներն անմիջապես կամ գրավոր եղանակով: Վերջապես Հաագայի Կոնվենցիայի վարույթը երկու ատյաններում տևել էր ընդհանուր առմամբ տասնմեկ ամիս, չնայած որ նման վարույթը պետք է ավարտվեր վեց շաբաթվա ընթացքում:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41

10,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում; նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

(տե՛ս, նաև X v. Latvia, թիվ 27853/09, 2011թ. դեկտեմբերի 13, Տեղեկատվական նոթ՝ թիվ 147; Sneersone and Campanella v. Italy, թիվ 14737/09, 2001թ. հուլիսի 12, Տեղեկատվական նոթ՝ թիվ 143):

Ոչ հաճախակի և սահմանափակ քանակությամբ ընտանեկան այցելություններ ցմահ բանտարկյալին՝ խախտում

*Trosin v. Ukraine – թիվ 39758/05
Տրոսինն ընդդեմ Ուկրաինիայի
Վճիռ 23.2.2012 [5-րդ բաժանմունք]*

Փաստեր

2005թ.-ին դիմումատուն ցմահ բանտարկության դատապարտվեց: Մինչև 2010թ.-ը ամեն վեց ամիսը մեկ նրան թույլատրվում էր ունենալ ընտանեկան այցելություններ: Նա ունենում էր ընտանիքի կողմից այցելություններ ամեն երեք ամիսը մեկ անգամ՝ առավելագույնը 4 ժամով: Միայն երեք չափահասներ կարող էին ներկա գտնվել այդ այցելությանը, մինչդեռ դիմումատուն ցանկանում էր պահպանել կապը իր մոր, կնոջ, որդու և եղբոր հետ: Դիմումատուն միայն հնարավորություն ուներ հաղորդակցվել այցելուների հետ ապակյա միջնապատի միջով և բանտի աշխատակցի ներկայությամբ:

ՕՐԵՆՔ

Ց-րդ հոդված
Ազատագրվումն անխուսափելիորեն հանգեցնում է կալանավորի ընտանեկան կյանքի

որոշակի սահմանափակումների, սակայն դիմումատուի դեպքում համապատասխան ներպետական օրենքի դրույթները ցմահ բանտարկվածների ընտանիքների կողմից այցելությունների հաճախականության և տևողության ավտոմատ սահմանափակումներ դրվեցին, անկախ այն բանից, թե արդյոք նման սահմանափակումներն իսկապես անհրաժեշտ էին յուրաքանչյուր առանձին գործով: Դատարանը, այնուամենայնիվ, գտնում է, որ ընտանեկան այցելություններին վերաբերող կարգավորումը չի կարող համարվել այդպիսի կոշտ սահմանափակում, և որ պետությունները պետք է զարգացնեն մեխանիզմներ, որոնք իշխանություններին թույլ կտան համաչափության բերել մրցակցող անձնական և հանրային շահերը և հաշվի առնել ամեն առանձին գործի յուրահատկությունները: Դիմումատուն միայն հնարավորություն ուներ միաժամանակ տեսնել իր ընտանիքի չորս անդամներից երեքին սահմանափակ ժամանակահատվածով և միայն ապակե միջնապատի միջով, որը բացառում էր որևէ ֆիզիկական շփում: Բացի այդ բանտի աշխատակցի ներկայությունը զրկում էր դիմումատուին իր ընտանիքի անդամների հետ հաղորդակցվելիս օգտվել իր անձնական կյանքի կամ մտերմության իրավունքից: Վերջապես՝ պետությունն անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել երաշխավորելու, որ ընտանիքի հետ հանդիպան դիմումատուի անձնական շահը պատշաճորեն համաչափ է բանտարկյալների շփումները արտաքին աշխարհի հետ սահմանափակող համապատասխան հանրային շահին:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41

5,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում; նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

ՀՈԴՎԱԾ 10

Արտահայտվելու ազատություն _____

Հայտնի դերասանի ձերբակալության և դատապարտման մասին հայտնելու արգելքը՝ խախտում

Axel Springer AG v. Germany
Աքսել Սփրինգեր ԱԳ-ին ընդդեմ
Գերմանիայի
39954/08, Վճիռ 7.2.2012 [ՄԴ]

Փաստեր

Դիմումատու ընկերությունը մեծ շրջանառություն ունեցող ազգային օրաթերթի հրատարակչական կազմակերպություն է, որը 2004թ.-ի սեպտեմբերին առաջին էջի վրա հրապարակեց հոդված՝ հայտնի բազմասերիանոց հեռուստաֆիլմի աստղի մասին, ով ձերբակալվել էր Մյունխենի գարեջրի փառատոնի ժամանակ կոկային պահելու համար: Հոդվածին հավելում է կատարվել ուրիշ էջին տեղադրված ավելի մանրամասն հոդվածով և լուսաբանված է այդ դերասանի երեք նկարներով: Այդ հոդվածի տպագրվելուց անմիջապես հետո դերասանը ձեռք է բերել հրաման, որը արգելում էր հոդվածի և նկարների հետագա որևէ հրատարակումը: 2005թ. հունիսին վերաքննիչ ատյանն ուժի մեջ է թողել հոդվածի հրատարակումն արգելող հրամանը (դիմումատու ընկերությունը չի բողոքարկել նկարներին վերաբերվող հրամանը): 2005թ.-ի

նույնբերին հրամանը տարածվել է գրեթե ամբողջ հողվածի նկատմամբ և դիմումատու ընկերությանը կարգադրվել է վճարել ֆիքսված տուգանք, որը վերաքննիչ ատյանը նվազեցրել է մինչև 1,000 եվրո:

Մինչդեռ՝ 2005թ.-ի հուլիսին թերթը հրատարակեց երկրորդ հոդվածը՝ հայտնելով, որ դերասանը դատապարտվել էր ապօրինի կերպով թմրամիջոցներ պահելու համար, որին հետևեց նրա բացարձակ խոստովանությունը, և որ նա տուգանվել էր: Դերասանը դիմեց և ստացավ երկրորդ հոդվածի հրապարակումն արգելող հրաման հիմնականում նույն հիմքերով, ինչ առաջինը: Վերաքննիչ ատյանն ուժի մեջ թողեց այդ վճիռը: Դիմումատու ընկերությանը հետագայում կարգադրվեց կատարել երկու տուգանքների վճարումները 5,000 եվրոյի չափով այդ հրամանի հետագա խախտումների համար:

ՕՐԵՆՔ

10-րդ հոդված

Ընդհանուր կանոն է, որ ներպետական դատարանների որոշումները հանդիսանում են դիմումատուի ընկերության արտահայտվելու ազատության իրավունքին միջամտություն, արգելք, որը սահմանված է օրենքով և հետապնդում է ուրիշների համբավը կամ իրավունքները պաշտպանելու օրինական նպատակ: Դատարանը քննարկում է, թե արդյոք միջամտությունն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում:

Դատարանը, կիրառելով ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքի և անձնական կյանքը հարգելու իրավունքի միջև համաչափության իր նախադեպային իրավունքում ամրագրված չափանիշը, նախ և առաջ նշեց, որ դերասանի

ձերբակալությանը և դատապարտմանը վերաբերող հրապարակված հոդվածները հանրամատչելի դատական փաստեր են, որոնք կարող էին համարվել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող փաստեր: Երկրորդը, դերասանը եղել է բավականին հայտնի՝ հասարակական գործիչ համարվելու համար, և եթե նույնիսկ իրավախախտման բնույթը այնպիսին էր, որ այն հավանաբար սովորական անհատի կողմից կատարված լինելու դեպքում չէր հրապարակվի և փաստը, որ դերասանը ձերբակալվել էր հրապարակավ և որ նա ակտիվորեն ձգտում էր լինել ուշադրության կենտրոնում, լուսաբանելով իր անձնական կյանքի վերաբերյալ մանրամասներ մի շարք հարցազրույցներում, նշանակում է, որ նրա օրինական ակնկալիքը, որ իր անձնական կյանքը արդյունավետորեն կպաշտպանվի, չի արդարացել: Ինչ վերաբերում է երրորդ չափանիշին, թե ինչպես է ստացվել տեղեկությունը և արդյոք այն եղել է ստույգ, դերասանի ձերբակալության մասին առաջին հոդվածը եղել է հիմնված բավարար փաստերի վրա, քանի որ այն հիմնված է եղել դատախազության կողմից տրամադրած տեղեկության վրա և երկու հոդվածներին վերաբերող տեղեկության իսկությունը չի վիճարկվել կողմերի միջև: Դիմումատու ընկերությունը չի գործել անբարեխղճորեն. այն ոչ միայն հետապնդումն իրականացնող մարմնի կողմից ստացել էր տեղեկության հաստատումը, այլ նաև ոչինչից չի ենթադրվել, որ ընկերությունը չի ապահովել համաչափություն տպագրման իր շահի և դերասանի անձնական կյանքը հարգելու իրավունքի միջև, մինչ բոլոր հանգամանքների լույսի ներքո եզրակացնելը, որ ընկերությունը չի ունեցել էական ծանրակշիռ հիմքեր ենթադրելու, որ

ինքը պետք է պահպաներ դերասանի անանունությունը: Ինչ վերաբերում է հրապարակումների բովանդակությանը, ձևին և հետևանքին, հոդվածները հրապարակել էին դերասանի անձնական կյանքի մանրամասները, բայց հիմնականում վերաբերում էին իր ձերբակալման հանգամանքներին և քրեական դատավարություն արդյունքին: Հոդվածում չէին եղել որևէ ստորացնող մեկնաբանություններ և անհիմն հայտարարություններ: Դիմումատու ընկերությունը չի վիճարկել նկարները հրապարակելու մասին արգելող հրամանը, և չի ապացուցվել, որ հոդվածների հրապարակումը դերասանի համար լուրջ հետևանքներով առաջացրել: Ինչ վերաբերվում վերջնական չափանիշին այն ժամանակ երբ դիմումատու ընկերության նկատմամբ կիրառված սանկցիաները եղել են մեղմ, նրանք, այնուամենայնիվ, կարող էին ունենալ սարսափելի հետևանք և արդարացի չէին վերևում հիշատակված գործոնների լույսի ներքո: Հետևաբար, ընկերության նկատմամբ կիրառված սահմանափակումները արդարացիորեն համաչափ չէին դերասանի անձնական կյանքի պաշտպանության օրինական նպատակին:

Եզրակացություն՝ խախտում (տասերկու ձայն ընդդեմ հինգի):

Հոդված 41

17,734.28 եվրո որպես նյութական վնասի փոխհատուցում, որը համապատասխանում է պատիժներին և ներպետական դատավարություններում կրած ծախսերին հանած 5,000 եվրոյի չափով երկու տուգանքների վճարումները:

(տե՛ս, նաև *Von Hannover v. Germany* (թիվ 2) 8-րդ հոդվածի ներքո՝ 17-րդ էջ)

Դատապարտումներ՝ դպրոցում հոմոֆոբիական թերթիկներ տարածելու համար՝ խախտում չկա

Vejdeland and Others v. Sweden
Վեյդելանդը և այլոք ընդդեմ Շվեդիայի
1813/07, Վճիռ 9.2.2012
[5-րդ բաժանմունք]

Փաստեր

2006թ.-ի հուլիսին դիմումատուները գերագույն դատարանի կողմից դատապարտվեցին ազգային կամ էթնիկական խմբերի դեմ քարոզչության համար՝ միջնակարգ դպրոցի բարձր դասարանների աշակերտների պահարաններում թողնելով հոմոֆոբիական թերթիկներ: Առաջին երեք դիմումատուների նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառվեց, որին գումարվեց մոտ 200-ից 2,000 եվրոյի սահմաններում տուգանքների վճարում, իսկ չորրորդ դիմումատուին նշանակվեց փորձաշրջան:

ՕՐԵՆՔ

10-րդ հոդված

Դիմումատուների դատապարտումները հանդիսանում են միջամտություն, որը «նախատեսված է օրենքով» և ծառայում են համբավը և ուրիշների իրավունքները պաշտպանելու օրինական նպատակին: Դատարանը համաձայնվեց Գերագույն դատարանի հետ, որ, նույնիսկ եթե դիմումատուների նպատակը շվեդական դպրոցներում կրթության օբյեկտիվության

բացակայության մասին բանավեճ սկսելն էր, անհրաժեշտ էր հաշվի առնել թերթիկներում ներառված ձևակերպումները, որտեղ նշվում էր, որ հոմասեռամոլությունը եղել է «նորմայից շեղվող սեռական հակվածություն», հասարակության վրա ունեցել է «բարոյապես կործանիչ ազդեցություն» և պատասխանատու է եղել ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի զարգացման համար: Բացի այդ, թերթիկներում հրապարակված էր, որ «հոմասեռամոլ լոբբին» փորձել էր նվազեցնել մանկապղծությունը: Նույնիսկ եթե նրանք ուղղակիորեն կոչ չեն արել բռնության համար, դրանք եղել են լուրջ և վնասակար հայտարարություններ: Մինչ մտքեր արտահայտելու դիմումատուների իրավունքի ճանաչումը, Գերագույն դատարանը գտել էր, որ թերթիկների մեջ արված հայտարարություններն եղել են վիրավորական: Բացի այդ, դատարանը հատուկ ուշադրություն դարձրեց այն փաստին, որ դիմումատուները տարածել էին թերթիկները՝ դնելով դրանք աշակերտների պահարանների մեջ կամ փակցնելով վրան: Եվրոպական դատարանը նշեց, որ աշակերտները եղել էին զգայունակ և խոցելի հասակում և թերթիկների տարածումը տեղի էր ունեցել դպրոցում, որը դիմումատուներից ոչ մեկը չի հաճախել և որին նրանք չեն ունեցել ազատ մուտքի իրավունք: Դիմումատուներից ոչ մեկի նկատմամբ չի կայացվել անմիջական ազատագրկմանը վերաբերվող դատավճիռ, և իրենց նկատմամբ կայացված դատավճիռները չեն եղել չափազանցված այդ հանգամանքներում:

Հետևաբար, դիմումատուների դատապարտումները և իրենց նկատմամբ դատավճիռները չեն եղել անհամաչափ հետապնդվող օրինական նպատակի հետ, և Գերագույն դատարանը հիմնավոր և

բավարար պատճառներ էր ունեցել իր որոշումների համար: Հետևաբար, ներպետական իշխանությունները կարող են համարել, որ միջամտությունն եղել է բավարար չափով անհրաժեշտ ժողովրդավարական հասարակության մեջ՝ համբավը և ուրիշների իրավունքները պաշտպանելու համար:

Եզրակացություն՝ խախտում չկա (միաձայն):

Դատապարտում՝ զրպարտության համար. պետությանը պատկանող հեռուստատեսության հետ անձնական նամակագրության ժամանակ պետական գործչի նկատմամբ անհիմն հայտարարությունների համար ներողություն հրապարակելու կարգադրություն՝ խախտում չկա

Gasior v. Poland
 Գասիերն ընդդեմ Լեհաստանի
 34472/07, Վճիռ 21.2.2012
 [4-րդ բաժանմունք]

Փաստեր

Դիմումատուի փեսան, ում պատկանում էր շինարարական ընկերությունը, կառուցեց շքեղ ամառանոց հայտնի լեհ պետական գործչի համար: 2003 և 2004թթ.-ին դիմումատուն ուղարկեց երկու նամակ լեհական հեռուստատեսությանը՝ հայտարարելով, որ պետական գործիչը հրաժարվել էր վճարել շքեղ ամառանոցի կառուցման համար: Նրա նամակները երբեք չեն հանձնվել հանրությանը: Սակայն, այն բանից հետո, երբ լրագրողներն իրեն դիմեցին մեկնաբանություններ տալու համար, պետական գործիչը անձնական մեղադրական եզրակացություն

ներկայացրեց դիմումատուի դեմ: 2004թ-ի դիմումատուի փեսան վճարման պահանջով քաղաքացիական հայց ներկայացրեց պետական գործչի դեմ: 2006թ.-ին դիմումատուն դատապարտվեց զրպարտության համար և կարգադրվեց հրապարակել գրավոր ներողություն և վճարել դատական ծախսերը (300 լեհական զլոտի չափով): Ներպետական դատարանները գտան, որ դիմումատուի նամակները հանդիսանում էին փաստերի շարադրանք և նա չէր ապացուցել դրանց հավաստիությունը: Այս առումով, իրենք հղում կատարեցին փորձագետի կողմից տրված ապացույցի վրա, որը ցույց տվեց, որ շքեղ ամառանոցը չի եղել անբասիր կառույց, ինչպես պնդում էր դիմումատուն: Դատարանները նաև հաշվի առան այն փաստը, որ դիմումատուի նամակները հանդես եկան որպես անհիմն անձնական հարձակում և օգտագործված արտահայտությունները, ինչպիսիք են՝ «ստախոս», «ագահ և կեղծ անձնավորություն» և «անազնիվ» քաղաքականության մեջ կարող էին հետևանք լինել հասարակական վստահություն կորուստին, որը անհրաժեշտ է քաղաքական կարիերայի համար: Դիմումատուի նկատմամբ քրեական դատավարությանը պայմանականորեն դադարեցվեց: 2008թ.-ին դատարանները մերժեցին փեսայի հայցը չհիմնավորված լինելու պատճառով, քանի որ շինարարական աշխատանքները եղել են կեղծ:

ՕՐԵՆՔ

10-րդ հոդված

Դիմումատուի նամակները պարունակում էին փաստերի բավականին լուրջ հիմնավորումներ, որոնք հետևաբար պահանջում էին էական արդարացում: Սակայն, նա հիմնավորել էր դրանք հիմնականում գուշակության հիման վրա: Իր դիտողությունները կարող էին կազմել հասարակական շահերին դիպչող հարցի բաց քննարկման մաս, քանի որ նա տեղեկացրել էր լրագրողներին պետական գործչի ենթադրյալ հակաիրավական վարքագծի մասին: Չնայած որ պետական գործիչների նկատմամբ թույլատրելի քննադատության սահմաններն ավելի լայն են, դա չի նշանակում, որ պետական գործիչներին չպետք է տրվի հնարավորություն պաշտպանել իրենց: Ներպետական դատարանների կողմից տրված պատճառներ եղել էին հիմնավոր և բավարար արգելքը հիմնավորելու համար: Մասնավորապես, դիմումատուի կողմից օգտագործված տերմինները ունեցել են շատ ստորացնող ենթատեքստ: Ի լրումն, ինչպես դատարանների կողմից սահմանվել էր, իրենք չունեին փաստերի հիմնավորում: Դիմումատուին միայն կարգադրել էին հրապարակել ներողություն: Քրեական դատավարությունը դրանից հետո դադարեցվել էր: Դեռ ավելին, քրեական դատավարությունն իր նկատմամբ իր սկիզբն էր առնում մեղադրական եզրակացությունից, որը ներկայացված էր պետական գործչի կողմից, այլ ոչ թե դատախազի կողմից: Պայմանավորվող պետություններին թողնված թույլատրելի հայեցողության շրջանակի կոնտեքստում, քրեական միջոցը որպես զրպարտությանը պատասխան չի կարող, որպես այդպիսին, համարվել անհամաչափ հետապնդվող օրինական նպատակին: Ընդհանուր առմամբ, ներպետական դատարանները

չէին գերազանցել իրենց թույլատրելի հայեցողության շրջանակը և առկա էր իրենց կողմից կիրառված միջոցների և հետապնդվող օրինական նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերությունը:

Եզրակացություն՝ խախտում չկա (վեց ձայն ընդդեմ մեկի):

ՀՈԴՎԱԾ 13

Արդյունավետ պաշտպանություն _____

Բաց ծովում հայտնաբերված միգրանտներին բողոքարկման իրավունքից զրկելը և նրանց վերադարձը ծագման երկիր՝ խախտում

Hirsi Jamaa and Others v. Italy

Հիրսի Ջամաան և այլոք ընդդեմ Իտալիայի 27765/09, Վճիռ 23.2.2012 [ՄՊ]

(տե՛ս 3-րդ հոդված, էջ 9)

Ապաստանի իրավունք խնդրողի արդյունավետ բողոքարկման միջոցի սահմանափակում՝ խախտում

I.M. v. France

Ի.Մ. ընդդեմ Ֆրանսիայի 9152/09, Վճիռ 2.2.2012 [5-րդ Բաժանմունք]

Փաստեր

Դիմումատուն Սուդանի քաղաքացի է: 2008թ.-ի մայիսին իր երկրում նա ձերբակալվում է ոստիկանության կողմից և ութնօրյա կալանքի տակ առնվում,

այնուհետև, երկու ամիս շարունակ նա մնում է իշխանությունների հսկողության տակ, ովքեր ամեն շաբաթ նրան հարցաքննում էին բռնության կիրառելով նրա նկատմամբ: 2008թ.-ի դեկտեմբերին, ձեռք բերելով երկրի մուտքի Ֆրանսիական կեղծ արտոնագիր, նա մեկնում է Իսպանիա, որպեսզի այնտեղից հատի սահմանը և մուտք գործի Ֆրանսիա: Հասնելով ֆրանսիական-իսպանական սահման՝ նա ձերբակալվում է անօրինական կերպով ազգային տարածք մուտք գործելու, այնտեղ բնակվելու և կեղծարարության համար: Ըստ նրա խոսքերի հենց այդ պահին, դիմումատուն ասել է, որ ցանկանում է ապաստանի դիմում ներկայացնել: Նա ժամանակավոր կալանքի տակ է առնվում, այնուհետև դատապարտվում դատարանի կողմից երկու ամիս ազատազրկման՝ օտարերկրացիների մասին օրենքը խախտելու համար:

Դիմումատուն ասում է, որ դատական նիստի ժամանակ հաշվի չի առնվել ապաստան խնդրելու իր մտադրության մասին իր կողմից արված հայտարարությունը: Մեղադրանքը առաջադրվելուց հետո, դիմումատուն բողոքարկում է վարչական դատարան՝ 2009թ.-ի հունվարի 9-ին պրեֆեկտուրայի կողմից սահմանը հատելիս իր նկատմամբ իրականացրած գործողությունների դեմ: Նրա բողոքարկումը մերժվում է: Նույնիսկ հաստատվում է, որ դիմումատուն ոչ մի ապաստանի դիմում չի ներկայացրել: 2009թ. հունվարի 16-ին դիմումատուն ձերբակալվում է՝ երկրից հեռացվելու հեռանկարով: Նույն օրը նա տեղեկացվում է, որ նրան տրվել է հնարավորություն ապաստանի դիմում ներկայացնելու համար, ինչը վերջինս ի կատար է ածում 2009թ.-ի հունվարի 19-ին:

Նրա ապաստանի դիմումը գրանցվում է 2009թ.-ի հունվարի 22-ին և որպես առաջնայնություն ունեցող դիմումատու նրա գործը փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալության (OFPRA) կողմից քննության է առվում 2009թ.-ի հունվարի 30-ին: 2009թ.-ի հունվարի 31-ին փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալության կողմից մերժվում է նրա դիմումը և վերջինս բողոքարկման համար դիմում է ապաստանի իրավունքի ազգային դատարան (CNDA): Այն պահից սկսած, երբ դիմումատուի դիմումը մերժվել է փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալության կողմից, երկրի իշխանությունները կարող էին կազմակերպել նրա վերադարձը ծագման երկիր: 2009թ.-ի փետրվարի 16-ին դիմումատուն դիմում է եվրոպական Դատարան՝ նպատակ ունենալով դադարեցնել իր նկատմամբ իրականացվող վերադարձի գործընթացը: Դատարանը բավարարում է նրա հայցը՝ տրամադրելով դատական գործընթացն ավարտելու համապատասխան ժամանակահատված: 2011թ.-ի փետրվարի 19-ին ապաստանի իրավունքի ազգային դատարանը (CNDA) նրան տալիս է փախստականի կարգավիճակ: Դիմումատուն ընթացիկ ժամանակահատվածում իր բնակության վայրից ձեռք էր բերել բնակության իրավունքի վկայական և տեղեկանք հոգեբույժի մոտից՝ առ այն, որ ինքը բռնությունների էր ենթարկվել:

ՕՐԵՆՔ

Հոդված 13 համակցված հոդված 3-ով

Դիմումատուն անցել է ֆրանսիական համակարգի դատական բոլոր ատյաններով Կոնվենցիայի 3 հոդվածի խախտմամբ իր բողոքը ներկայացնելու համար. նա նախ դիմել է փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալություն, այնուհետև ապաստանի իրավունքի ազգային դատարան, որից հետո բողոքարկել է վարչական դատարան՝ սահմանի հատման ժամանակ պրեֆեկտուրայի կողմից իր հանդեպ իրականացրած գործողությունների դեմ: Դիմումատուն պնդում է, որ զգուշացրել է իր մտադրության մասին՝ Ֆրանսիայից ապաստան խնդրելու վերաբերյալ՝ հենց այն պահից, երբ իրեն ձերբակալել են, ինչը հաշվի չի առնվել: Միայն արդեն վարչական կալանքի տակ գտնվելու ժամանակ է, որ կարողացել է փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալությանը ներկայացնել իր ապաստանի դիմումը:

Քանի որ դիմումատուն սկզբում հսկողության տակ է եղել, այնուհետև կալանավորված, չի կարողացել անձամբ ներկայանալ պրեֆեկտուրա ապաստանի դիմում ներկայացնելու համար՝ ինչպես պահանջում է ֆրանսիական օրենքը: Բացի այդ, արձանագրության մեջ բավարար տվյալներ չեն բերվում այն մասին, որ վերջինս փորձ է արել ապաստանի դիմում ներկայացնել անմիջապես հսկողության տակ առնվելու ընթացքում: Իշխանությունները ենթադրում են, որ կալանքի տակ գտնվող դիմումատուի կողմից արված ապաստանի դիմումը կանխամտածված խարդախություն

է կամ ապաստանի իրավունքի չարաշահում, որն արվել է պարզ պատճառով՝ երկիրը լքելու որոշման ընդունումից հետո: Ուստի միայն այն պատճառով, որ իր ապաստանի դիմում ներկայացնելու մտադրությունը նախորդել է իր հսկողության տակ անցնելուն, առիթ է հանդիսացել, որպեսզի նրա ապաստանի դիմումը դասվի առաջնահերթների շարքում: Դատարանը միայն այս ապացուցող փաստն ունի, որ վերջինս մինչև հսկողության տակ անցնելն է մտադրված եղել ապաստան խնդրել, ուրիշ ոչ մի ապացուցող հանգամանք:

Ապաստանի արագացված գործընթացը, որը կիրառվում է եվրոպական բազմաթիվ պետություններում, հնարավորություն է տալիս հեշտորեն պարզել, թե տվյալ դիմումը չարաշահում է, թե ակնհայտորեն հիմնավոր: Ապաստանի դիմումի վերաքննությունը առաջնայություն ունենալու դեպքում, չի զրկում կալանքի տակ գտնվող օտարերկրացուն, որպեսզի իր դիմումը մանրակրկիտ ուսումնասիրվի, այն դեպքում, երբ նրա առաջին դիմումը ապաստան խնդրելու սովորական գործընթացով է քննվել: Մինչդեռ, սույն վարույթում, խոսքը գնում է առաջին դիմումի մասին, և ոչ թե վերաքննության տրված դիմումի: Ուստի, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալության (OFPRA) կողմից դիմումատուի դիմումի առաջնայության կարգով ուսումնասիրումը միակ գործողությունը կլինե՝ նրան երկրից դուրս բերելուց առաջ, եթե նա Դատարանի կողմից ժամանակին չստանար միջանկյալ միջամտություն:

Դիմումատուի դիմումի արտոնյալ դասակարգումը գործընթացում էական հետևանքների է բերում: Այսպիսով, իր դիմումը ներկայացնելու համար

սահմանված քսանմեկօրյա ժամանակահատվածը կրճատվում է մինչև հինգ օր: Այդպիսի կարճ ժամանակահատվածը շատ անիրական էր, որպեսզի դիմումատուն՝ կալանքի տակ գտնվելով հանդերձ կարողանար, ինչպես կարգն է պահանջում սովորական գործընթացի ժամանակ, ֆրանսերեն լեզվով պատրաստի ապաստանի լիարժեք և փաստաթղթավորված դիմում: Դիմումատուն փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալությունում (OFPRA) հարցազրույցի ժամանակ չի կարողանում ապահովել այն անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք որոշիչ դեր պիտի ունենաին իր գործի ուսումնասիրության ընթացքում: Նրա հայտարարությունները համարվում են անորոշ, նույնիսկ սխալական և դառնում բացասական որոշման հիմք:

Ուստի գործընթացի արագացված եղանակը թույլ չի տալիս դիմումատուին պարզաբանել իր իրավիճակի վերաբերյալ, մինչդեռ ավելի ուշ, նա կարող էր ցրել ենթադրյալ անհամապատասխանությունները և հավելել բացակայող փաստաթղթերը:

Վերաքննության դիմումի հապճեպությունը, չպետք է լինի իրական գործընթացի արդյունավետության երաշխիքների հաշվին, որի նպատակն է պաշտպանել դիմումատուին կամայականորեն Սուդան վերադարձից: Ուստի, դիմումատուի ապաստանի դիմումի արտոնյալ գործընթացում դասակարգելը ավարտվում է փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալության (OFPRA) կողմից դրա չափազանց արագ, նույնիսկ հակիրճ քննությամբ:

Դիմումատուի հանդեպ առկա այս բոլոր խոչընդոտները, այն պարագայում, երբ

վերջինս զրկված էր ազատությունից և խոսքը գնում էր ապաստան խնդրելու նրա առաջին դիմումի մասին, գործնականում ազդել է վերջինիս կողմից բողոքի արդյունավետ ձևակերպման վրա ինչը հողված 3-ի խախտում է ենթադրում:

Ինչ վերաբերում է սահմանում իր հանդեպ իրականացված վերաբերմունքի համար վարչական դատարան դիմելուն, վերջինիս վերաքննության դիմումը հանձնվել էր իրավասու դատավորին, որը պետք է գործը ուսումնասիրեր 3-րդ հողվածի ենթադրյալ խախտման տեսանկյունից: Այստեղ ևս դիմումատուն ուներ չափազանց կարճ ժամանակահատված՝ քառասունութ ժամ, վերաքննության դիմումը ձևակերպելու համար՝ մասնավորապես մասնավոր իրավունքի մասով, որի ժամկետը վարչական դատարանների առաջ երկու ամիս էր: Դիմումատուն այդ ընթացքում հասցնում է միայն անմիջապես դատական նիստից առաջ դատարանի կողմից հատկացված մի փաստաթանի բանավոր խորհուրդներով, արաբերեն լեզվով մի նամակ ձևակերպել, որում նույնիսկ փաստեր չեն բերվում:

Այս հանգամանքը տարավ ներգաղթյալի դիմումի մերժման: Վերջինս նաև քննադատության արժանացավ, այն բանի համար, որ ապաստանի դիմումը ավելի վաղ չէր ներկայացրել, այն դեպքում, երբ չի ապացուցվում, որ կալանավորված դիմումատուն ունեցել է հնարավորություն նման դիմում ներկայացնելու համար: Հետևաբար, կան լուրջ կասկածներ, որ դիմումատուն վարչական դատարան դիմելով կարող էր արդյունավետորեն օգտվել 3-րդ հողվածով նախատեսված իր իրավունքների խախտման պաշտպանությունից:

Այսպիսով, ինչ վերաբերում է, ներպետական իրավունքի արդյունավետությանը, եթե դրանք տեսականորեն հասանելի էին՝ դիմումատուի կողմից վերաքննիչ դիմում ներկայացնելու համար, ապա գործնականում եղել են սահմանափակումներ՝ կապված բազմաթիվ գործոնների հետ. խոսքը հատկապես վերաբերում է նրա դիմումի մեխանիկորեն արտոնյալ դասակարգմանը, որը կրճատում էր դրա ներկայացման ժամկետները, ինչպես նաև ընթացակարգային և նյութական դժվարությունները՝ փաստեր բերելու համար, այն դեպքում, երբ նա գտնվում էր ձերբակալման մեջ, կամ երբ կալանքի տակ էր: Ինչ վերաբերում է փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալության (OFPRA) և վարչական դատարանի դատավորի կողմից դիմումի ուսումնասիրության որակին, այն մասամբ է կախված նրանց աշխատանքից, քանի որ մյուս մասով կապված է ձևակերպված վերաքննության դիմումի որակից, որը իրավական և լեզվական աջակցության բացակայության պատճառով անբավարար էր: Ավելին՝ փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալություն (OFPRA) առաջին դիմումը ներկայացնելու համար, որը ի դեպ բավականին բարդ է, գործում են սահմանված սահմանափակ ժամկետներ: Ապաստանի իրավունքի ազգային դատարան (CNDA) բերած դիմումում բացակայում էր փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ֆրանսիական գործակալության (OFPRA) ապաստանի դիմումի մերժման հետ կապված հանգամանքը, այն դեպքում, երբ դրա

ուսումնասիրումը իրականացվում է արտոնյալ գործընթացի շրջանակներում: Մինչդեռ, միայն Դատարանի 39-րդ հոդվածի կանոնակարգի կիրառմամբ էր հնարավոր կանխել դիմումատուի հեռացումը: Այդ պահից սկսած, եթե Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված վերաքննության արդյունավետությունը, կախված չէ ի օգուտ դիմումատուի լուծում գտնելուց, Դատարանը ստիպված է գալ այն եզրակացության, որ առանց իր միջամտության, դիմումատուն կվերադարձվեր Սուդան, առանց իր դիմումի հնարավորին չափ լիարժեք ուսումնասիրման:

Այսպիսով, դիմումատուն, գործնականում չի ունեցել արդյունավետ վերաքննություն, որը նրան թույլ կտար ներկայացնել 3-րդ հոդվածի խախտմամբ, բավարար հիմնավորված բողոք՝ այն պայմաններում, երբ նրա հեռացումը դեպի Սուդան ընթացքի մեջ էր:

Եզրահանգում՝ խախտում (միաձայն):

Հոդված 41

Խախտման ճանաչումն ինքին հանդիսացավ ոչ նյութական վնասի հատուցում:

ՀՈՂՎԱԾ 46

Պիլոտային վճիռներ

Վճռի կատարումը _____

Ընդհանուր միջոցներ _____

Պատասխանող պետությունից պահանջվում է ներկայացնել հստակ ժամկետներ և իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ուղղված սեփականության վերականգնման կառուցվածքային խնդրին

Mutishev and others v. Bulgaria – 18967/03
Մուտիշևը և այլք ընդդեմ Բուլգարիայի
Վճիռ (արդարացի փոխհատուցում)
28.2.2012 [4-րդ Բաժանմունք]

Փաստեր

2009թ.-ի դեկտեմբերի 3-ին կայացված հիմնական վճռում Դատարանը գտավ դիմումատուի իրավունքների խախտում Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո, այն բանում, որ իշխանությունների մերժումը վերականգնել իրենց գյուղատնտեսական հողը և որոշ այլ հողատարածքների վերականգնման հարցում ուշացումը խախտել էր՝ ընդհանուր շահի ու դիմումատուի իրավունքների միջև արդար համաչափության սկզբունքը և դրել էր իրենց վրա անհամաչափ բեռ: Հիմնական վճռից հետո դիմումատուները քայլեր են ձեռնարկել կատարելու գյուղատնտեսական հողի վերաբերյալ դատարանի համապատասխան վճիռը, որը հանդես էր եկել որպես սահմանված խախտման աղբյուր: Իրենք որոշում են ընդունել գյուղատնտեսական հողը դիմումատուներին վերադարձնելու մասին և տեղեկացրել են իրենց, որ պետք է ձևական պահանջները կատարվեն, որպեսզի ավարտվի վերականգնման գործընթացը: Ինչ

վերաբերում է այլ հողատարածքներին, պարզվեց, որ վերականգնման գործընթացը շարունակական բնույթ է կրում:

ՕՐԵՆՔ

41-րդ հոդված

Արդարացված է կարծել, որ վերականգնման գործընթացը պետք է ավարտված լիներ Դատարանի վճիռը վերջնական դառնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, դիմումատուի և իշխանությունների համագործակցության դեպքում: Չկատարելով այդ ժամանակաշրջանում հողի փաստացի փոխանցումը դիմումատուներին, պատասխանատու պետությունը պետք է վճարի միաժամանակ բոլոր դիմումատուներին խնդրո առարկա հողատարացքների ներկա արժեքը (433,000 եվրո գյուղատնտեսական հողի և 120,000 եվրո այլ հողատարածքների համար) որպես նյութական վնասի փոխհատուցում: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասի փոխհատուցմանը, Դատարանը նշանակեց ամեն դիմումատուին 1,000 եվրո փոխհատուցում:

Հոդված 46

Ստանալով մի շարք այլ գանգատներ Բուլղարիայի դեմ, որոնց մեջ բարձրացվում էր նույն հարցը, ինչ դիմումատուի գործում, Դատարանը նշեց, որ այս առումով Բուլղարիայում կարող է գոյություն ունենալ կառուցվածքային խնդիր: Հետևաբար, դատարանը կարգադրեց, որ այս գործով իր վճռի կատարման արդյունքում ընդուվեն ընդհանուր միջոցառումներ, մասնավորապես գյուղատնտեսական հողի վերականգնման վերաբերյալ վերջնական վճիռների պարտադիր կատարման համար պետք է սահմանվեն հստակ ժամկետներ, և

պետք է սահմանվի իրավական պաշտպանության միջոց, որը փոխհատուցում ստանալու արդյունավետ միջոցից օգտվելու ժամանակ անձանց հնարավորություն կտա չսահմանափակվել ժամկետներով:

Թիվ 4 Արձանագրության 4-րդ հոդված

Օտարերկրացիների խմբակային արտաքսման արգելում _____

Բաց ծովում հայտնաբերված միգրանտների վերադարձը ծագման երկիր՝ Թիվ 4 Արձանագրության 4-րդ հոդվածի կիրառում, խախտում

Hirsi Jamaa and Others v. Italy
Հիրսի Ջամաան և այլք ընդդեմ Իտալիայի
27765/09, Վճիռ 23.2.2012 [ՄՊ]

(տե՛ս 3-րդ հոդված, էջ 9)

